ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ

ՏԵՂԵԿԱՆՔ

ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻՆ, ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆԸ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ԼՐԱՏՎԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՎԱՆԱՁՈՐ 2022

HELSINKI CITIZENS ASSEMBLY

NED National Endowment for Democracy
Supporting freedom around the world

www.hcav.am

Տեղեկանքը կազմեցին՝ Նազելի Մովսեսյան

Արմինե Սադիկյան

Խմբագիր՝ Արթուր Սաքունց

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2021 թվականի նոյեմբերի 30-ին Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը հրապարակեց տեղեկանք[1] ՀՀ զինված ուժերի բարեփոխումներին, վերակառուցմանը և արդիականացմանն ուղղված ՀՀ կառավարության մինչեւ 2021 թվականի նոյեմբերի 30-ը իրականացրած գործողությունների գնահատման արդյունքների վերաբերյալ:

Տեղեկանքն անդրադառնում է ՀՀ զինված ուժերի բարեփոխումների վերաբերյալ կառավարության 2021 - 2026 թթ. հնգամյա ծրագրով[2] նախատեսված առաջնահերթություններին:

Կարևորելով բարեփոխումների գործընթացի գնահատման շարունակականությունը, ինչպես նաև զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության մեխանիզմների բարելավման անհրաժեշտությունը, Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը շարունակում է հետևել ՀՀ զինված ուժերի բարեփոխումներին, վերակառուցմանը և արդիականացմանն ուղղված ՀՀ կառավարության գործողությունների իրականացման գործընթացը:

Ինչպես հիշատակված, այնպես էլ ներկայացվող տեղեկանքում Կազմակերպության կողմից ուսումնասիրություններն իրականացվել են զինված ուժերում բարեփոխումների վերաբերյալ պաշտոնական աղբյուրներով և զանգվածային լրատվամիջոցներով տարածված եւ հանրությանը հասանելի դարձած տեղեկությունների վերլուծությունների հիման վրա:

Հիշեցնենք, որ ՀՀ կառավարության հնգամյա ծրագրով նախատեսված զինված ուժերի բարեփոխումների վերաբերյալ ենթակետի առաջնահերթությունները հետևյալն են.

[1] https://hcav.am/zekuyc-pn-30-11-2021/
[2] https://www.gov.am/files/docs/4586.pdf,

1. *Զինծառայության ժամկետների էական փոփոխություն՝ ի հաշիվ պայմանագրային ծառայության աճի, աստիճանաբար անցում պրոֆեսիոնալ բանակի:*

2. *Զինված ուժերի կառավարման և ղեկավարման համակարգի արդյունավետության բարձրացում, պաշտպանության ոլորտի համապետական խնդիրների լուծմանն ուղղված անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունների իրականացում, ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության վերանայում, նոր ռազմական դոկտրինի մշակում, միասնական ավտոմատացված կառավարման համակարգի ներդրում:*

3. *Արդյունավետության բարձրացում զինված ուժերի կազմակերպական և հաստիքային կառուցվածքի բարելավման միջոցով:*

4. *Սպառազինության և ռազմական տեխնիկայի արդիականացում:*

5. *Զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի մեխանիզմների կատարելագործում:*

6. *Ռազմական կրթության և գիտության զարգացում:*

7. *Տեղեկատվական անվտանգության և կիբեռանվտանգության ոլորտի բարեփոխումներ:*

8. *Զինված ուժերի բարոյահոգեբանական պատրաստության մակարդակի բարձրացմանն ուղղված ծրագրերի իրականացում:*

9. *Զինծառայողների և նրանց ընտանիքների սոցիալական պաշտպանության բարձրացում, զինծառայության գրավչության բարձրացման և զինծառայողի հեղինակության մեխանիզմների կատարելագործում, զինծառայողների բնակարանային ապահովության ուղղությամբ ծրագրերի իրականացում, պատերազմի հետևանքներն իրենց վրա կրող զինծառայողների սոցիալական և առողջապահական նոր ծրագրեր:*

10. *Զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական և քաղաքացիական վերահսկողության, զինված ուժերի կարգապահության խթանման, զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների կատարելագործում:*

11. *Ռազմավարական նշանակության օբյեկտների ու ենթակառուցվածքների անվտանգության մակարդակի բարձրացում:*

2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 19-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021-2026 ԹԹ ԾՐԱԳՐԻ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԲԱՐՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Առաջնահերթություն 1

Զինծառայության ժամկետների էական փոփոխություն՝ ի հաշիվ պայմանագրային ծառայության աճի, աստիճանաբար անցում պրոֆեսիոնալ բանակի

Սույն առաջնահերթությունը ներառվել է Կառավարության հնգամյա ծրագրում «հաշվի առնելով զինվորական ծառայության զարգացման ու կատարելագործման հեռանկարները»: Ծրագրի համաձայն՝ այս կերպ «Կառավարությունը խթանելու է զինվորական ծառայության շահադրդման թե՛ նյութական, և թե՛ բարոյահոգեբանական մեխանիզմները»:

Մինչ Կառավարության հնգամյա ծրագրի հաստատումը՝ 2021 թ-ի մայիս-հունիս ամիսներին պաշտոնական մակարդակով (ՀՀ անվտանգության խորհրդի քարտուղար[3], ՀՀ ԶՈՒ ԳՇ պետ Արտակ Դավթյան[4]) հնչեցվում էին կարծիքներ և հավաստիացումներ այն մասին, որ ժամկետային պարտադիր զինծառայության ժամկետը կարող է կրճատվել՝ երկու տարվա փոխարեն դառնալով մեկուկես տարի:

[3]https://www.civilnet.am/news/624388/%d5%ba%d5%a1%d6%80%d5%bf%d5%a1%d5%a4%d5%ab%d6%80-%d5%a6%d5%ab%d5%b6%d5%ae%d5%a1%d5%bc%d5%a1%d5%b5%d5%b8%d6%82%d5%a9%d5%b5%d5%b8%d6%82%d5%b6%d5%a8-%d5%a5%d6%80%d5%af%d5%b8%d6%82-%d5%bf%d5%a1%d6%80%d5%b8%d6%82%d6%81-%d5%af%d5%a1%d6%80%d5%b8%d5%b2-%d5%a7-%d5%a4%d5%a1%d5%bc%d5%b6%d5%a1%d5%ac-%d5%b4%d5%a5%d5%af%d5%b8%d6%82%d5%af%d5%a5%d5%bd-%d5%bf%d5%a1%d6%80%d5%ab-%d5%a1%d5%bd%d5%a5%d5%ac-%d5%a7-%d5%a1%d5%ad-%d6%84%d5%a1%d6%80%d5%bf%d5%b8%d6%82%d5%b2%d5%a1%d6%80%d5%a8/?fbclid=IwAR35YgtJGqIBSlyXzZIajn_wP79WEWc7EdRSfnAkKmwM-uQtp6y5Y_SWx8c, https://www.youtube.com/watch?v=U49rI0aSHZk&t=21s

[4]https://armeniasputnik.am/20210822/jamketayin-tsarayutyuny-petqe-pahpanvi-gsh-pet-28742964.html

Միաժամանակ նշվում էր, որ ժամկետային զինծառայության ժամկետների կրճատումը լինելու է ի հաշիվ պայմանագրային զինծառայողների թվի աճի։

Մինչդեռ, մեկ տարի անց՝ 2022 թ. մարտի 15-ին ՀՀ պաշտպանության փոխնախարար Արման Սարգսյանի՝ լրատվամիջոցների հետ զրույցից պարզ դարձավ, որ մինչ այժմ պայմանագրային զինծառայողների թիվը ոչ միայն չի ավելացել, այլ հակառակը՝ ավելացել է զինված ուժերից զորացրվող պայմանագրային զինծառայողների և սպաների թիվը[5]։ Ավելին, ըստ Ա. Սարգսյանի՝ զորացրման գործընթացն արագացնելու նպատակով զինծառայողները դիմում են փաստաբանների։

Ինչ վերաբերում է ռազմաուսումնական հաստատություններում սովորողներին, ապա ԱԺ պաշտպանության և անվտանգության հարցերի հանձնաժողովի փոխնախագահ Արմեն Խաչատրյանը հանձնաժողովի 2022թ. մարտի 15-ի նիստում նշեց, որ Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարանում բարեփոխումների լուրջ աշխատանք է արվում և, որ այն շուտով տեսանելի կլինի։

2022 թ. հուլիսի 7-ին ՀՀ Ազգային ժողովը երկրորդ ընթերցմամբ ամբողջությամբ ընդունեց «Զինվորական ծառայության և զինծառայողի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծը[6], որի համաձայն 20 տարի ժամկետով պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու համար պայմանագիր կնքած, ռազմաուսումնական հաստատությունն ավարտած և ՀՀ պաշտպանության նախարարության համակարգում կամ ՀՀ ԱԱԾ սահմանպահ զորքերում սպայական պաշտոնի նշանակված սպայական կազմի զինծառայողին անհատույց օգտագործման իրավունքով հատկացվում է բնակարան։ Նշված օրենքին առավել մանրամասն անդրադարձել ենք սույն տեղեկանքի առաջնահերթություն 9-ում։

Ժամկետային զինծառայության պայմանների փոփոխություններ կատարվում են նաև ԱՀ/ԼՂ զինված ուժերում։ ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի անձնակազմի կառավարման գլխավոր վարչության պետի տեղակալ, գնդապետ Սահակ

[5] https://www.aravot.am/2022/03/15/1253662/
[6] http://www.parliament.am/draftreading_docs8/K-291_DR2.pdf

Սահակյանը 2022 թ-ի հունիսի 28-ին լրատվամիջոցների հետ զրույցում հայտնեց[7], որ ռազմաքաղաքական ղեկավարության կողմից կա որոշում այն մասին, որ 2022 թ. օգոստոսին պարտադիր ժամկետային զինծառայողների զորացրվելուց հետո Արցախում ծառայություն են իրականացնելու պայմանագրային զինծառայողները։

Ս. Սահակյանի խոսքերով՝ ներդրված է փաթեթ, համաձայն որի, պայմանագրային զինծառայողները՝ հիմնականում Արցախի ռեսուրսից, համալրում են ամբողջ Արցախի Պաշտպանության բանակի թափուր հաստիքները։ Ս. Սահակյանը նաև հայտնեց, որ Հայաստանում ևս փորձ է արվում առաջնագծում ծառայության նշանակել պայմանագրային զինծառայողների՝ ժամկետային զինծառայողներին «հեռացնելով առաջնագծից», սակայն գործնականում այս մոտեցումը ՀՀ-ում կիրառվում է դեռևս միայն մեկ հատվածում՝ 3-րդ բանակային կորպուսում, այն էլ՝ մասամբ, քանի որ 3-րդ բանակային կորպուսում ժամկետային զինծառայողների 10 %-ը, ըստ Ս. Սահակյանի, դեռևս ընդգրկվում են մարտական հերթապահության մեջ: Այս փոփոխությունների իրականացման դեպքում, ըստ Ս. Սահակյանի, «ժամկետային զինծառայողները զբաղվելու են միայն պատրաստությամբ և անհրաժեշտության դեպքում պիտի կիրառվեն ըստ նշանակության»: Իսկ մինչև այդ, ըստ Ս. Սահակյանի, սկսած 2022 թ. ամառային զորակոչից՝ զորակոչվող ժամկետային զինծառայողները առնվազն կես տարի մարտական հերթապահություն չեն իրականացնի առաջնագծում:

2022 թ. հուլիսի 19-ին ՀՀ անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանը «Արմենպրես» լրատվական կայքի հետ զրույցում հաստատեց[8] Արցախում ժամկետային զինծառայություն իրականացնելու վերաբերյալ տեղեկությունը՝ հայտնելով, որ Արցախում հայաստանյան ժամկետային զինծառայողներ սեպտեմբերից հետո չեն լինելու և հավելեց, որ ԼՂ իշխանություններից ստացած տեղեկությունների համաձայն՝ Լեռնային Ղարաբաղի զորակոչիկները շարունակելու են զորակոչվել պաշտպանության բանակում ծառայության։

[7] https://www.azatutyun.am/a/31919950.html
[8] https://armenpress.am/arm/news/1088539.html

2022 թ. հունիսի 6-ին ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը Հանրային հեռուստաընկերության եթերում անդրադառնալով պրոֆեսիոնալ բանակի ստեղծմանը, նշեց, որ պաշտպանության նախարարությունը շեշտը դնելու է ժամկետային զինծառայողների՝ պայմանագրային զինծառայության սահուն անցման վրա[9]: Ինչ վերաբերում է գործող պայմանագրային զինծառայողներին, ապա նախարարը նշեց, որ վերջիններս ունենալու են ատեստավորման հնարավորություն, որի արդյունքում նրանք կկարողանան օգտվել Կառավարության սոցիալական ապահովության ծրագրերից՝ նախատեսված ռազմական կրթություն ստացած սպաների համար:

Անդրադառնալով 2021 թ. օգոստոսի 20-ին ՀՀ ԱԽ քարտուղար Արմեն Գրիգորյանի այն հայտարարությանը[10], որ սահմանային հսկողությունն ու պաշտպանությունն ամբողջապես պիտի փոխանցվի սահմանապահ զորքերին և ընդլայնվելու է ԱԱԾ սահմանապահ զորքերի թվաքանակը՝ նշենք, որ ՀՀ կառավարության 2022 թ. մարտի 17-ի նիստին ներկայացվեց նախագիծ, Սյունիքի մարզի Գորիս-Խնձորեսկ մայրուղու հարևանությամբ 10 հեկտար մակերեսով հողատարածք ՀՀ ԱԱԾ-ին հատկացնելու մասին:

Հիմնավորման մեջ նշվեց, որ ՀՀ Ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերը փուլային տարբերակով Պաշտպանության նախարարությունից ընդունելու են հայ-ադրբեջանական պետական ամբողջ սահմանի պահպանությունը, իսկ այդ նպատակով անհրաժեշտ է ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքերում իրականացնել բարեփոխումներ: Նախատեսվում է սահմանապահ զորքերի անձնակազմի թվի ավելացում, զորքի համար մշտական տեղակայման վայրերի կառուցում, պետական սահմանի ինժեներական կահավորում[11]:

[9] https://www.1lurer.am/hy/tv_program/PapikyanGhazaryan0606
[10] https://www.youtube.com/watch?v=S9y7UAMyvsQ
[11] https://news.am/arm/news/691975.html

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ ինչպես նախորդ տարի՝ հնգամյա ծրագրի հաստատման սկզբից, այնպես էլ այժմ՝ զինվորական ծառայության ժամկետների փոփոխության վերաբերյալ վերջնական որոշում դեռևս չի կայացվել:

Միաժամանակ հստակ չէ, թե ինչ կոնկրետ գործողություններ են կատարվում պրոֆեսիոնալ բանակի ստեղծման ուղղությամբ և արդյոք դրան ուղղված քայլերը արդյունավետ են, թե ոչ, քանի որ սույն առաջնահերթության մաս կազմող այս դրույթը պիտի իրագործվեր պայմանագրային զինծառայողների թվի աճի շնորհիվ, որի մասին նույնպես որևէ հստակ տեղեկություններ առկա չեն:

Բացի այդ, արձանագրելով, որ պրոֆեսիոնալ բանակի ստեղծման բաղադրիչ հանդիսացող ԱԱԾ սահմանապահ զորքերի գործառույթների փոփոխությունների վերաբերյալ առկա է նախագիծ՝ հայ-ադրբեջանական պետական սահմանի պահպանությունը ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքերին փոխանցելու մասին, այնուամենայնիվ չկա հստակ տեղեկություն, թե ներկայումս ՀՀ սահմանի որ հատվածների պաշտպանությունն է իրականացվում ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքերի կողմից:

Ըստ հավաստի եւ հասանելի տեղեկությունների՝ ժամկետային զինծառայողները դեռեւս շարունակում են ներգրավվել սահմանային պաշտպանության մեջ:

Առաջնահերթություն 2

Զինված ուժերի կառավարման և ղեկավարման համակարգի արդյունավետության բարձրացում, պաշտպանության ոլորտի համապետական խնդիրների լուծմանն ուղղված անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունների իրականացում, ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության վերանայում, նոր ռազմական դոկտրինի մշակում, միասնական ավտոմատացված կառավարման համակարգի ներդրում

Նշված առաջնահերթությամբ Կառավարությունը նախատեսում է իրականացնել «պաշտպանության ոլորտի համապետական խնդիրների լուծմանն ու պաշտպանության կազմակերպման ընթացակարգերի հստակեցմանն ուղղված անհրաժեշտ օրենսդրական փոփոխություններ, այդ թվում՝ պետության ռազմական անվտանգության համակարգի մարմինների պաշտպանության ոլորտին առնչվող լիազորությունների ու պարտականությունների»:

Ազգային անվտանգության ռազմավարության վերանայումից և նոր ռազմական դոկտրինի մշակումից բացի, ՀՀ Կառավարության հնգամյա ծրագրով նախատեսվում է մշակել «պետության պաշտպանության պլան», որի համար նախատեսվում է «կատարելագործել պետությունը պաշտպանության նախապատրաստելու գործիքակազմերն ու ընթացակարգերը»: Սույն կետում նաև ներկայացվում է միասնական ավտոմատացված կառավարման համակարգի ներդրման մասին, որն իրականացվելու է «զինված ուժերի կառավարման և ղեկավարման արդյունավետության բարձրացման և որոշումների կայացման ժամանակահատվածը կրճատելու նպատակով»: Մասնավորապես՝ ըստ ծրագրի՝ «ներդրվելու է ավտոմատացված կառավարման այնպիսի համակարգ, որն ապահովելու է ժամանակակից ռազմական գիտությանը համահունչ արագ և առաջանցիկ որոշումների կայացումը»: Այդ նպատակով նախատեսվում է զինված ուժերի կառավարման և զորային օղակներում իրականացնել կազմակերպչական և հաստիքային փոփոխություններ: Հավելվում է, որ «առաջադրված խնդիրների լուծման նպատակով կազմավորվելու են մեծ շարժունակությամբ և կրակային հզորությամբ, երկար ժամանակ ինքնուրույն մարտական գործողություններ վարելու ունակ զորամիավորումներ ու ստորաբաժանումներ»:

2020 թ. հուլիսի 10-ին ընդունվեց ՀՀ անվտանգության նոր ռազմավարությունը[1], որը երկրորդն էր անկախության ողջ ժամանակահատվածում (առաջինն ընդունվել է 2007 թ-ին)[12]:

[12] https://www.primeminister.am/u_files/file/Different/AA-Razmavarutyun-Final.pdf

Ինչ վերաբերում է «պաշտպանության ոլորտի համապետական խնդիրների լուծմանն ու պաշտպանության կազմակերպման ընթացակարգերի հստակեցմանն ուղղված անհրաժեշտ օրենսդրական փոփոխություններին», նշենք, որ 2022 թ. փետրվարի 22-ին իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում (e-draft.am) տեղադրվեց նախագիծ «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին[13]:

Ըստ այդմ՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության քաղաքականությունն իրականացնում է ՀՀ կառավարությունը, որն իր մեջ, ի թիվս այլ գործառույթների, ներառում է ռազմական դրության հայտարարում, պատերազմ հայտարարելու կամ խաղաղություն հաստատելու մասին ՀՀ Ազգային ժողովին առաջարկության ներկայացում, Հանրապետության նախագահին՝ պաշտպանության ոլորտի միջազգային պայմանագրեր կնքելու վերաբերյալ առաջարկությունների ներկայացում:

Անվտանգության խորհուրդը (ԱԽ) սահմանում է պաշտպանության ոլորտի քաղաքականության հիմնական ուղղությունները, իրականացնում է պաշտպանության ռազմավարական պլանավորումն ու վերանայումը, ինչպես նաև, ի թիվս այլ գործառութների, հաստատում է զինված ուժերի և այլ զորքերի զարգացման պլանը, զինված ուժերի ծավալման, զորահավաքային և կիրառման պլանները, ՀՀ տարածքի պաշտպանության օպերատիվ սարքավորման պլանը և քաղաքացիական պաշտպանության հանրապետական պլանը: ԱԽ նիստերը հրավիրում և վարում է վարչապետը:

ՀՀ վարչապետն, ի թիվս այլ գործառույթների, համակարգում է պետական կառավարման մարմինների գործունեությունը պաշտպանության ոլորտում, Հայաստանի Հանրապետությանը սպառնացող անմիջական վտանգի և (կամ) զինված հարձակման դեպքում հրավիրում է Անվտանգության խորհրդի նիստ, կառավարության կողմից զինված ուժերի կիրառման մասին որոշում կայացնելու անհնարինության դեպքում Պաշտպանության նախարարի առաջարկությամբ

[13] https://www.e-draft.am/projects/4038/about

կայացնում է որոշում զինված ուժերի կիրառման պլանը գործողության մեջ դնելու մասին՝ այդ մասին անհապաղ տեղեկացնելով Կառավարության անդամներին, ինչպես նաև պատերազմ հայտարարվելու դեպքում, որպես զինված ուժերի գերագույն հրամանատար, ընդունում է պատերազմական ժամանակի քաղաքական և ռազմական բնույթի որոշումներ:

ՀՀ պաշտպանության նախարարն, ի թիվս այլ գործառույթների, պաշտպանության ոլորտի քաղաքականության հիմնական ուղղությունների շրջանակներում իրականացնում է պաշտպանության նախարարության և զինված ուժերի ղեկավարումը, ապահովում է Պաշտպանության նախարարության միջոցով զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողությունը:

Կառավարության հնգամյա ծրագրի սույն առաջնահերթությամբ սահմանվող դրույթի համաձայն, այն է՝ «ազգային անվտանգության ռազմավարության վերանայման ու նոր ռազմական դոկտրինի մշակման» ուղղությամբ իրականացվող քայլերի մասին տեղեկություններ հայտնի չեն: Եթե ենթադրենք, որ որոշակի քայլեր ձեռնարկվում են, ապա հստակ է, որ այն մասնակցային բնույթ չի կրում:

Հայտնի չէ նաև, թե ինչ քայլեր են կատարվել միասնական ավտոմատացված կառավարման համակարգի ներդրման ուղղությամբ:

Առաջնահերթություն 3

Արդյունավետության բարձրացում զինված ուժերի կազմակերպական և հաստիքային կառուցվածքի բարելավման միջոցով

Կառավարության սույն առաջնահերթությանը՝ զինված ուժերի կազմակերպական և հաստիքային կառուցվածքի բարելավմամբ արդյունավետության բարձրացմանը հասնելու նպատակով, ըստ հնգամյա ծրագրի, «ձևավորվելու են մեծ շարժունակությամբ օժտված մարտական կազմավորումներ»:

2022 թ. հունիսի 6-ին ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը Հանրային հեռուստաընկերության եթերում հայտարարեց[14] Պաշտպանության նախարարությունում նախատեսվող կառուցվածքային փոփոխությունների մասին, որոնցից մեկը ՀՀ ԶՈՒ Գլխավոր շտաբի պետի ՀՀ պաշտպանության նախարարի առաջին տեղակալ լինելու հանգամանքն է: Մեկ ամիս անց՝ 2022 թ. հուլիսի 6-ին, Սուրեն Պապիկյանը ԱԺ պաշտպանության և անվտանգության հանձնաժողովի նիստում և ԱԺ նիստում ներկայացրեց[15] «Պաշտպանության մասին», «Զինվորական ծառայության և զինծառայողի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագծերի փաթեթը, որը հուլիսի 7-ին ամբողջությամբ ընդունվեց երկրորդ ընթերցմամբ[16]:

Նախագծում բացի կառուցվածքային փոփոխություններից, ներառված են նաև այլ փոփոխություններ, որոնք վերաբերում են զինծառայողների սոցիալական ապահովությանը:

Նշված փոփոխությունները կներկայացվեն սույն տեղեկանքի համապատասխան ենթակետում:

Անդրադառնալով զինված ուժերի կառուցվածքային և հաստիքային կառուցվածքի բարելավմանը՝ տեղին է ներկայացնել պաշտպանական ոլորտի բարձրաստիճան պաշտոնյաների կադրային-հաստիքային շարունակական փոփոխությունները:

Նախորդ տեղեկանքում[17] անդրադարձել էինք ՀՀ պաշտպանական գերատեսչության ղեկավարների փոփոխություններին և նրանց պաշտոնավարման ժամանակահատվածներին վերջին երկու տասնամյակի ընթացքում,՝ արձանագրելով, որ 2000 թ-ից մինչև 2022 թ. նոյեմբերի 30-ը ընկած ժամանակահատվածում ՀՀ պաշտպանության նախարարի պաշտոնը զբաղեցրել է 9 անձ:

---

[14] https://www.1lurer.am/hy/tv_program/PapikyanGhazaryan0606
[15] https://www.youtube.com/watch?v=oho8ffPZ-rI&t=7s
[16] https://www.youtube.com/watch?time_continue=163&v=XpaoNKXAVxE&feature=emb_logo
[17] https://hcav.am/wp-content/uploads/2021/11/%D4%B6%D5%AB%D5%B6%D5%BE%D5%A1%D5%AE-%D5%B8%D6%82%D5%AA%D5%A5%D6%80-%D5%A2%D5%A1%D6%80%D5%A5%D6%83%D5%B8%D5%AD%D5%B8%D6%82%D5%B4%D5%B6%D5%A5%D6%80.pdf (էջ 12)

Նշենք, որ ինչպես և նախկինում, այժմ ևս այս կադրային փոփոխությունների իրականացման վերաբերյալ հանրությանը չի ներկայացվել որևէ հիմնավորում կամ պատճառաբանություն: Արդյոք կադրային այս փոփոխությունները պայմանավորված են զինված ուժերի բարեփոխումների և զարգացման իրականացման անհրաժեշտությամբ՝ հայտնի չէ:

Կադրային-հաստիքային ինտենսիվ փոփոխություններ են իրականացվել ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբում և ՀՀ ՊՆ այլ ստորաբաժանումներում:

Նախորդ տեղեկանքում[18] անդրադարձել էինք ՀՀ ԶՈՒ Գլխավոր շտաբի պետի պաշտոնում կատարված նշանակումներին, արձանագրելով, որ այդ պաշտոնում 2018 - 2021 թթ կատարվել է երկու նշանակում:

Հիշեցնենք, որ 2018 թ. մայիսին ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետ նշանակված Արտակ Դավթյանը ազատվեց այդ պաշտոնից երկու տարի անց՝ 2020 թ. հունիսին: Նրան այդ պաշտոնում փոխարինեց Օնիկ Գասպարյանը, ով ազատվեց պաշտոնից ութ ամիս անց՝ 2021 թ-ի մարտին, ինչից հետո պաշտոնում կրկին նշանակվեց Արտակ Դավթյանը, ով պաշտոնավարեց մոտ ևս մեկ տարի՝ ազատվելով պաշտոնից 2022 թ. փետրվարին: Միայն հինգ ամիս անց ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետի պաշտոնում կատարվեց նոր նշանակում: 2022 թ. հուլիսի 14-ին ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետ նշանակվեց Էդուարդ Ասրյանը[19]:

Նշենք, որ Արտակ Դավթյանը ՀՀ ՊՆ նախկին նախարար Դավիթ Տոնոյանի և բանակին զինամթերք մատակարարած ընկերության տնօրեն Դավիթ Գալստյանի հետ մեղադրվում են 2018 թ. ավելի քան 4200 ժամկետանց, տեխնիկական պահանջներին չհամապատասխանող հրթիռների ձեռքբերման մեջ[20]: Գործի քննությունն ընթացքի մեջ է:

---

[18] https://hcav.am/wp-content/uploads/2021/11/%D4%B6%D5%AB%D5%B6%D5%BE%D5%A1%D5%AE-%D5%B8%D6%82%D5%AA%D5%A5%D6%80-%D5%A2%D5%A1%D6%80%D5%A5%D6%83%D5%B8%D5%AD%D5%B8%D6%82%D5%B4%D5%B6%D5%A5%D6%80.pdf (էջ 15)

[19] https://www.president.am/hy/decrees/item/5643/

[20] https://www.azatutyun.am/a/31649064.html

Գլխավոր շտաբի պետի պաշտոնը զբաղեցնող անձանց պաշտոնանկությունների պատճառներին անդրադարձել ենք նախորդ տեղեկանքում:[21]

Հատկանշական է, որ Էդուարդ Ասրյանը այն բարձրաստիճան զինվորականներից է, ով 2021 թ. փետրվարի 21-ին միացել էր այն ժամանակ ԶՈՒ գլխավոր շտաբի պետ Օնիկ Գասպարյանի նախաձեռնությամբ կատարված հայտարարությանը[22], որում մասնավորապես ասվում էր, որ «ՀՀ վարչապետը և կառավարությունն այլևս ի վիճակի չեն ընդունելու ադեկվատ որոշումներ՝ հայ ժողովրդի համար այս ճգնաժամային և ճակատագրական իրավիճակում»:

Թե ինչ տրամաբանությամբ է նշանակվում երկրի պաշտպանական և անվտանգային համակարգի պատասխանատու կառույցի ղեկավարը՝ հասկանալի չէ: Ավելին, ինչքանով է հիմնավոր ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետի պաշտոնում մի սպայի նշանակումը, որը խախտել է ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված զինված ուժերի քաղաքական չեզոքության սահմանադրական կարգի սկզբունքը:

ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը 2022 թ. հունիս 6-ին Հանրային հեռուստաընկերության եթերում հայտարարեց[23], որ գլխավոր շտաբի պետ կնշանակվի կառուցվածքային փոփոխություններից հետո՝ հավելելով, որ կարևոր է ճիշտ որոշում կայացնելը այս պաշտոնում նշանակում կատարելիս:

Ինչ վերաբերում է բարձրաստիճան զինվորական այլ պաշտոններում փոփոխություններին, ապա շարունակելով Կազմակերպության նախորդ տարվա ուսումնասիրությունները՝ ներկայացնենք նոր նշանակումներն ու պաշտոնանկությունները 2021 թ. նոյեմբերի 30-ից 2022 թ. հուլիսի 15-ն ընկած ամիսների ընթացքում:

Այսպես, 2021 թ. դեկտեմբերի 16-ին Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի պետի տեղակալի պաշտոնից ազատվեց Ստեփան Գալստյանը[24]: Վերջինս ձերբակալվեց 2021 թ. հոկտեմբերին՝ ԶՈՒ կարիքների համար ռազմամթերքի մատակարարման գործընթացում չարաշահումներ և առանձնապես

[21] https://hcav.am/zekuyc-pn-30-11-2021/ (էջ 15)
[22] https://www.facebook.com/samvel.asatryan.5074/posts/474964876863565
[23] https://www.1lurer.am/hy/tv_program/PapikyanGhazaryan0606
[24] https://www.president.am/hy/decrees/item/5498/

խոշոր չափերով հափշտակություններ կատարելու դեպքերի առթիվ քննվող քրեական գործի շրջանակներում[25]: 2022 թ. հունվարի 10-ին այս պաշտոնում նշանակվեց Առաքել Մարտիկյանը[26]:

2021 թ. դեկտեմբերի 28-ին Դանիել Բալայանն ազատվեց Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության Մարշալ Արմենակ Խանփերյանցի անվան ռազմական ավիացիոն համալսարանի պետի պաշտոնից[27]: Ի դեպ, նոր նշանակում չի կատարվել: Ըստ ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանի՝ ավիացիոն համալսարանը և Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարանը միատեղվելու են և ստեղծվելու է ռազմական ակադեմիա, որն իր մեջ ներառելու է երկու ինստիտուտ՝ ռազմաավիացիոն և համազորային: Ակադեմիան, ըստ պաշտպանության նախարար Ս.Պապիկյանի, ենթադրելու է, որ այնտեղ լինելու են ամբիոններ և համապատասխան ֆակուլտետներ սահմանապահ զորքերի ուսուցման համար[28]: Բացի դրանից, միավորված ակադեմիայում լինելու է առանձին ֆակուլտետ, որն առավելապես ուղղված է լինելու սպաների պրոֆեսիոնալիզմի բարձրացմանը[29]:

2021 թ. դեկտեմբերի 30-ին Խաղաղապահ ուժերի բրիգադի հրամանատարի պաշտոնից ազատվել է Արտակ Տոնոյանը[30]: Նույն օրը այս պաշտոնում նշանակվել է Արսեն Մանգասարյանը[31]:

2021 թ. դեկտեմբերի 30-ին Արթուր Երոյանը նշանակվել է Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանի պետի պաշտոնում[32]: Ի դեպ, նախկինում այս պաշտոնը զբաղեցնող Խաչատուր Խաչատրյանը ազատվել էր դեռևս 2021 թ. սեպտեմբերի 27-ին[33]: Փաստացի, նոր նշանակումը կատարվել է երեք ամիս անց: Մինչ այդ Արթուր Երոյանը զբաղեցնում էր Հայաստանի Հանրապետության զինված ուժերի

[25] https://www.azatutyun.am/a/31489065.html
[26] https://www.president.am/hy/decrees/item/5508/
[27] https://www.president.am/hy/decrees/item/5500/
[28] https://168.am/2022/07/06/1729809.html
[29] https://www.1lurer.am/hy/tv_program/PapikyanGhazaryan0606
[30] https://www.president.am/hy/decrees/item/5501/
[31] https://www.president.am/hy/decrees/item/5502/
[32] https://www.president.am/hy/decrees/item/5503/
[33] https://www.president.am/hy/decrees/item/5427/

գլխավոր շտաբի հետախուզության գլխավոր վարչության պետի տեղակալի պաշտոնը[34]:

2022 թ. փետրվարի 18-ին ՀՀ զինված ուժերի թիկունքի պետի, վարչության պետի պաշտոնից ազատվեց Ռոմիկ Մարգարյանը[35]: Այս պաշտոնում նշանակվեց Արամ Պողոսյանը[36]:

2022 թ. փետրվարի 18-ին ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի հետախուզության գլխավոր վարչության պետի, զինված ուժերի գլխավոր շտաբի պետի տեղակալի պաշտոնից ազատվեց Արայիկ Հարությունյանը[37]: Միայն հինգ ամիս անց՝ 2022 թ. հուլիսի 14-ին, այս պաշտոնում նշանակվեց Արթուր Հարությունյանը[38]:

2022 թ. փետրվարի 24-ին ՀՀ զինված ուժերի բարոյահոգեբանական ապահովման վարչության պետի պաշտոնից ազատվեց Արթուր Պողոսյանը[39]: Այս պաշտոնում նշանակվեց Սերյոժա Ստեփանյանը[40]:

2022 թ. փետրվարի 24-ին ՀՀ ԶՈՒ հատուկ բանակային կորպուսի շտաբի պետ-կորպուսի հրամանատարի տեղակալի պաշտոնից ազատվեց Արմեն Գյոզալյանը[41]: Այս պաշտոնում նշանակվեց Արայիկ Մինասյանը[42]:

2022 թ. փետրվարի 24-ին ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի օպերատիվ գլխավոր վարչության պետ-ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետի տեղակալ նշանակվեց Արմեն Գյոզալյանը[43]:

2022 թ. փետրվարի 24-ին ՀՀ զինված ուժերի ինժեներական զորքերի պետ-վարչության պետի պաշտոնից ազատվեց Արմեն Առուշանյանը[44]: Այս պաշտոնում նշանակվեց Կարեն Գրիգորյանը[45]:

---

[34] https://www.president.am/hy/decrees/item/5503/
[35] https://www.president.am/hy/decrees/item/5540/
[36] https://www.president.am/hy/decrees/item/5541/
[37] https://www.president.am/hy/decrees/item/5539/
[38] https://www.president.am/hy/decrees/item/5644/
[39] https://www.president.am/hy/decrees/item/5547/
[40] https://www.president.am/hy/decrees/item/5550/
[41] https://www.president.am/hy/decrees/item/5549/
[42] https://www.president.am/hy/decrees/item/5555/
[43] https://www.president.am/hy/decrees/item/5549/
[44] https://www.president.am/hy/decrees/item/5548/
[45] https://www.president.am/hy/decrees/item/5553/

2022 թ. փետրվարի 24-ին ՀՀ զինված ուժերի հրթիռային զորքերի և հրետանու պետ-վարչության պետի պաշտոնից ազատվեց Արմեն Հարությունյանը[46]: Այդ պաշտոնում նշանանվեց Գոռ Նիկոյանը[47]:

2022 թ. փետրվարի 24-ին ՀՀ զինված ուժերի ՀՀ պատրաստության գլխավոր վարչության պետ-ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետի տեղակալի պաշտոնից ազատվեց Անդրանիկ Մակարյանը[48]: Այս պաշտոնում նշանակվեց Վաչագան Ներսեսյանը[49]:

2022 թ. մայիսի 19-ին ՀՀ զինված ուժերի ռազմաբժշկական վարչության պետ նշանակվեց Գեղամ Փաշիկյանը[50]: Նախկինում այս պաշտոնը երկար տարիներ զբաղեցնող Սահակ Օհանյանը ազատվել էր այդ պաշտոնից դեռևս 2021 թ սեպտեմբերի 13-ին: Պաշտոնակատար նշանանակված Գեղամ Փաշիկյանը 2022 թ. մարտի 28-ին դիմում էր ներկայացրել ազատման մասին: Այնուամենայնիվ, 2022 թ. մայիսին Գ. Փաշիկյանը նշանակվեց ռազմաբժշկական վարչության պետ:

Այսպիսով, վերջին շուրջ 8 ամիսների ընթացքում՝ 2021 թ. նոյեմբերի 30-ից մինչև 2022 թ. հուլիսի 15-ն ընկած ժամանակահատվածում, ՋՈՒ ԳՇ 13 պաշտոններում կատարվել են փոփոխություններ:

Ներկայումս, ըստ հասանելի պաշտոնական տվյալների ուսումնասիրության, մեկ պաշտոնում՝ Արմենակ Խանփերյանցի անվան ռազմական ավիացիոն համալսարանի պետի պաշտոնում նոր նշանակում չի կատարվել: Այս առումով հիշատակենք, որ ըստ պաշտոնական տեղեկությունների՝[51] նախատեսվում է երկու ռազմաուսումնական հաստատությունների միավորում:

Այսպիսով, զինված ուժերի կազմակերպական և հաստիքային կառուցվածքի բարելավման ուղղությամբ, բացի կադրային շարունակվող լայնածավալ փոփոխություններից, այլ գործողությունների մասին տեղեկություն չի հրապարակվել: Միևնույն ժամանակ, կադրային փոփոխությունները որևէ կերպ չեն մեկնաբանվում,

[46] https://www.president.am/hy/decrees/item/5545/
[47] https://www.president.am/hy/decrees/item/5552/
[48] https://www.president.am/hy/decrees/item/5546/
[49] https://www.president.am/hy/decrees/item/5551/
[50] https://www.president.am/hy/decrees/item/5603/
[51] https://www.1lurer.am/hy/tv_program/PapikyanGhazaryan0606

հետևապես անհնար է խոսել դրանց արդյունավետության մասին կամ թե ինչքանով են դրանք պայմանավորված արդյունավետության բարձրացման նպատակով կառուցվածքային փոփոխություններով: Փաստ է, որ կադրային նշանակումների վերաբերյալ տեղեկությունները չեն վկայում կառուցվածքային փոփոխությունների իրականացման մասին:

Առաջնահերթություն 4

Սպառազինության և ռազմական տեխնիկայի արդիականացում

Սույն առաջնահերթությամբ նախատեսվում է խթանել ռազմաարդյունաբերական համալիրի զարգացումը՝ հիմնված հայաստանյան գիտահետազոտական ներուժի և միջազգային փորձի վրա:

Կառավարության հնգամյա ծրագրի համաձայն՝ «շարունակվելու են սպառազինության և ռազմական տեխնիկայի արդիականացման և նոր նմուշների ձեռքբերման գործընթացները: Առավել նպատակային քաղաքականություն է իրականացվելու դաշնակից և գործընկեր պետությունների հետ ռազմական և ռազմատեխնիկական համագործակցության ոլորտներում: Հատուկ կարևորություն է տրվելու այդ ոլորտում դաշնակցային և գործընկերային հարաբերությունների զարգացմանը, մասնավորապես՝ ընդլայնվելու է Ռուսաստանի Դաշնության հետ համագործակցությունը, որն առաջնահերթ ուղղվելու է համատեղ ուժերի (համակարգերի) ռազմական ներուժի ավելացմանը և երկու պետությունների զինված ուժերի առավելագույն փոխգործունակության ապահովմանը»:

Դեռևս 2021 թ. օգոստոսի 22-ին «Սպուտնիկ Արմենիայի» հետ զրույցում[52] ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետ Արտակ Դավթյանը հայտնեց, որ նոր սպառազինություն ձեռք բերելու համար բոլոր հնարավորությունները կան: Նա հավելեց, որ երբ դրա ժամանակը գա, ապա կցուցադրեն համագործակցության շրջանակներում ձեռքբերված միջոցները:

[52] https://www.lragir.am/2021/08/22/663023/

Մինչդեռ ՀՀ պաշտպանության նախարարը 2022 թ. հունիսի 6-ին հանրային հեռուստաընկերության եթերում հայտնեց, որ չի պատրաստվում հանրայնորեն հայտնել այն քայլերի ու ձեռքբերումների մասին, որը ՀՀ կառավարությունը իրականացնում է կամ պատրաստվում է իրականացնել: Ըստ նախարարի, դրանք գաղտնի ընթացակարգով կատարվող գործողություններ են:

Գաղտնիք չէ, որ Հայաստանը սպառազինության մեծ մասը ձեռք է բերում Ռուսաստանից[53]: 2021 թ. դեկտեմբերին Մոսկվայում անցկացվող «Армия 2021» ռազմարդյունաբերական ցուցահանդեսի շրջանակում Հայաստանը սպառազինության մատակարարման պայմանագիր կնքեց ռուսաստանյան ընկերությունների հետ[54]:

Այնուամենայնիվ, սպառազինության ձեռքբերումների մասին տվյալները բավարար չեն:

ՀՀ կառավարության 2022 թ. փետրվարի 28-ին հրապարակվեց զեկույց[55] կառավարության ծրագրի 2021 թ. կատարման ընթացքի և արդյունքների մասին, որտեղ ներկայացվեց, որ սպառազինության և ռազմական տեխնիկայի արդիականացման նպատակով զինված ուժերը համալրվել են ուղղաթիռներով, անօդաչու թռչող սարքերով, հրթիռահրետանային, հակատանկային, հրանետային, կապի, ինժեներական, հրաձգային, ռազմատեղագրական միջոցներով, զրահապատ մեքենաներով, ավտոմոբիլային տեխնիկայով, հակաօդային պաշտպանության, հրետանային ռադիոլոկացիոն կայաններով:

2022 թ. ընթացքում սպառազինության ձեռքբերման մասին միակ պաշտոնական հաղորդագրությունը հրապարակվեց 2022 թ. հունվարի 25-ին ՀՀ պաշտպանության նախարարության պաշտոնական կայքէջում[56]: Հաղորդագրության մեջ նշվում էր այն մասին, որ ՀՀ զինված ուժերի ավիացիան համալրվել է ժամանակակից, բազմաֆունկցիոնալ նոր ուղղաթիռներով, որոնք նախատեսված են դեսանտային, կրակային, տրանսպորտային և սանիտարական խնդիրներ կատարելու համար:

[53] https://www.sipri.org/commentary/topical-backgrounder/2021/arms-transfers-conflict-zones-case-nagorno-karabakh
[54] https://www.azatutyun.am/a/31427856.html
[55] http://www.parliament.am/draft_docs8/176_2022_Karavarityan_Zekuyts.pdf
[56] https://mil.am/hy/news/10298

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը 2022 թ. հունվարի 28-ին Հայաստանի զինված ուժերի կազմավորման 30-րդ տարեդարձի կապակցությամբ իր շնորհավորական ուղերձում նշեց, որ բանակի մարտունակությունը, սպառազինությունը, ծառայության պայմանները բարելավելը կառավարության առաջնահերթությունն է[57]:

2022 թ. մարտի 22-ին ԱԺ Պաշտպանության և անվտանգության մշտական հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանը հայտնեց[58], որ հաշվի առնելով, որ Հայաստանը ՌԴ-ի ռազմավարական գործընկերն է, ՀԱՊԿ անդամ՝ հիմնականում սպառազինություն ձեռք է բերում ՌԴ-ից:

Նկատենք, որ ՀՀ պետբյուջեի 2022 թ. նախագծով՝ 33 միլիարդ դրամով ավելանալու են ռազմական ծախսերը: 2021 թ. 312 միլիարդ դրամի փոխարեն 2022 թ-ին հատկացվել է 345 միլիարդ դրամ: Հատկացումների մեծ մասն ուղղվելու է ՊՆ շենքային պայմանների բարելավմանը: Միաժամանակ, 2021 թ. համեմատ չի փոխվել ռազմական կարիքների բավարարման համար նախատեսվող գումարի չափը՝ 217 միլիարդ դրամ[59]:

2022 թ. ապրիլի 2-ին ՀՀ ԱԽ քարտուղար Արմեն Գրիգորյանը հանդիպեց[60] Ֆրանսիայի զինված ուժերի նախարարության Սպառազինության գլխավոր վարչության պատվիրակության հետ՝ Մարի-Անյես Պիկար-Շեսելիի գլխավորությամբ:

Հանդիպման ընթացքում քննարկվել են բանակի բարեփոխումների ոլորտում երկկողմ հնարավոր համագործակցությունը:

Հիշեցնենք, որ դեռևս 2021 թ. ապրիլի 23-ին ՀՀ ԱԽ քարտուղար Արմեն Գրիգորյանը հայտարարարեց[61], որ Հայաստանի զինված ուժերի բարեփոխումները կիրականացվեն Ռուսաստանի հետ գործակցությամբ, քանի որ Ռուսաստանի զինված ուժերի բարեփոխումները վերջին 12 տարում ամենահաջողվածներից են և որ Ռուսաստանն ունի ամենահզոր բանակներից մեկն աշխարհում: Այս համատեքստում նկատենք, որ 2022 թ. փետրվարի 24-ին Ռուսաստանի կողմից Ուկրաինայի դեմ սանձազերծած պատերազմի արդյունքում ԱՄՆ-ն, Եվրոպական Միության որոշ

[57] https://www.azatutyun.am/a/31675412.html
[58] https://www.1in.am/3086941.html
[59] https://fip.am/17125
[60] https://www.lragir.am/2022/04/02/708853/
[61] https://ria.ru/20210423/armiya-1729623625.html

երկրներ և մի շարք այլ երկրներ պատժամիջոցներ կիրառեցին Ռուսաստանի նկատմամբ տարբեր ոլորտներում, այդ թվում նաև ռազմաարդյունաբերական ոլորտում: Արդյունքում, Ռուսաստանի պաշտպանական արտադրության ոլորտը դժվարություններ ունեցավ ինքնաթիռների և ուղղաթիռների համար նախատեսված շարժիչների, ինչպես նաև զինտեխնիկայի համար նախատեսված էլեկտրոնային միջուկների արտադրության հետ: Հայաստանը, որպես Ռուսաստանի դաշնակիցներից, Ռուսաստանից զենք և զինտեխնիկա է ձեռք բերում ինչպես ՀԱՊԿ գծով, այնպես էլ երկկողմ պայմանագրերի շրջանակում:

2022 թ. հունիսի 6-ին Ռազմավարության և տեխնոլոգիաների վերլուծության կենտրոնի տնօրեն Ռուսլան Պուխովը «Սպուտնիկ Արմենիա» լրատվամիջոցի հետ զրույցում կարծիք հայտնեց[62], որ Ռուսաստանը դուրս կմղվի սպառազինության միջազգային որոշ շուկաներից և չի կարողանա ապահովել այն 15 մլրդ դոլարը, որը վերջին տարիների ընթացքում նրան բերում էր ռազմաարդյունաբերական համալիրը: Մյուս գործոնը, ըստ փորձագետի, կապված է ռազմական հատուկ գործողությունների ձգձգման հետ: Մասնավորապես՝ ըստ Պուխովի կենդանի ուժի և տեխնիկայի զգալի կորուստներ կան, և Ռուսաստանը ստիպված կլինի լրացնել այդ բացը, ինչը կանդրադառնա այլ երկրներ, այդ թվում՝ դաշնակիցներին զենքի մատակարարումների վրա: Բացի այդ, գները կբարձրանան, կլինեն ուշացումներ մատակարարման ժամկետների առումով:

Հատկանշական է, որ Կառավարության հնգամյա ծրագրով նախատեսված է առավել նպատակային քաղաքականություն իրականացնել դաշնակից և գործընկեր պետությունների հետ ռազմական և ռազմատեխնիկական համագործակցության ոլորտներում՝ հատուկ կարևորություն տալով Ռուսաստանի Դաշնության հետ համագործակցությանը, որն առաջնահերթ ուղղվելու է «համատեղ ուժերի (համակարգերի) ռազմական ներուժի ավելացմանը և երկու պետությունների զինված ուժերի առավելագույն փոխգործունակության ապահովմանը»:

[62] https://armeniasputnik.am/20220603/patzhamijvocnery-harvatsum-en-rd-pashtpanakan-artadrutjany-hajastani-hamar-zenq-kgtnvi-42792515.html

Հիշեցնենք, որ 2021 թ. օգոստոսի 2-ին ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի պաշտոնակատար Հայկ Չոբանյանը «Ազատության» հետ հարցազրույցում տեղեկացրեց[63], որ մինչև 2023 թ. ակնկալվում է գրեթե կրկնապատկել հայկական արտադրության անօդաչու թռչող սարքերի համար նախատեսված ֆինանսական միջոցները: Իսկ 2030 թվականին նախատեսվում է, որ այդ շուկան կհասնի մինչև 93 միլիարդ դոլարի:

2022 թ. հունվարի 19-ին ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար Վահագն Խաչատուրյանը լրատվամիջոցների հետ ճեպազրույցում տեղեկացրեց[64], որ Հայաստանում արդեն կան պատրաստի անօդաչու թռչող սարքեր, դրանք փորձարկումների փուլում են: Փորձարկումից և ՀՀ ՊՆ կողմից հավանության արժանանալուց հետո կկնքվի պայմանագիր ՀՀ ՊՆ հետ: Ըստ Խաչատուրյանի ԱԹՍ-ները երկու տեսակի են՝ հետախուզական, և մարտական: Պետությունը հակված է ունենալ ռազմական իրավիճակներում կիրառվող բոլոր տեսակի անօդաչու թռչող սարքեր, այդ թվում՝ կամիկաձեներ:

2022 թ. ապրիլի 4-ին «Դավարո» ընկերության հիմնադիր տնօրեն Դավիթ Գալոյանը «Հայկական ժամանակի» հետ զրույցում հայտնեց[65], որ աշխատանքներ են տարվում 5-րդ սերնդի պատերազմի համար անհրաժեշտ բոլոր սարքավորումների ուղղությամբ՝ հեռակառավարվող և ռոբոտիզացված ԱԹՍ-ներ, լազերային կառավարվող, հետախուզական և հարվածային ու անօդաչու թռչող սարքերի նոր մոդելներ: Ըստ Գալոյանի, նմուշ կա, որն անցել է պետական փորձարկում: Որոշակի խմբաքանակ կհանձնվի զինված ուժերին, որից հետո կսկսվեն ուսուցման գործընթացն ու զորային փորձարկումները: ԱԹՍ-ները նախատեսված են

[63] https://www.azatutyun.am/a/31389827.html
[64] https://armeniasputnik.am/20220119/arden-patrasti-hajkakan-ats-ner-kan-bta-nakharar-37735463.html
[65] https://www.armtimes.com/hy/article/234805

հակառակորդի օդանավակայանները, զենքի պահեստները, հիմնականում անշարժ օբյեկտները խոցելու համար:

Անդրադառնալով Կառավարության հնգամյա ծրագրի «Արտաքին քաղաքականություն» ենթաբաժնին, որտեղ մասնավորեցվում է, որ ՀԱՊԿ-ը դիտարկելով որպես ՀՀ անվտանգային համակարգի կարևորագույն օղակ՝ Կառավարությունը շարունակելու է ակտիվորեն ներգրավված լինել կառույցի աշխատանքներին:

Այս առաջնահերթության նախատեսված խնդիրների լուծման տեսակետից 2021 թ-ի տեղեկանքում անդրադարձել ենք Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության պաշտոնատար անձանց հանդիպումներին զինված ուժերի բարեփոխումների՝ հատկապես սպառազինության և ռազմական տեխնիկայի արդիականացման համատեքստում[66]:

Հայաստանի, Ադրբեջանի և Ռուսաստանի միջև 2020 թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության[67] ստորագրումից հետո մինչ 2021 թ. նոյեմբերի 15-ը հրապարակայնացված տվյալների համաձայն՝ ՌԴ բարձրաստիճան զինվորականները, պաշտպանության բնագավառի պաշտոնյաները կատարել են առնվազն 10 այցելություն Հայաստան, որի ընթացքում հանդիպել են ՀՀ ՊՆ, ԶՈՒ ԳՇ և այլ ստորաբաժանումների պաշտոնյաների հետ: Նույն ժամանակահատվածում Հայաստանի զինվորական պաշտոնյաները Ռուսաստան են այցելել 8 անգամ: Այսինքն՝ մեկ տարվա ընթացքում՝ 2020 թ. նոյեմբեր - 2021 թ. նոյեմբերն ընկած ժամանակահատվածում, զինված ուժերի բարեփոխումների և զարգացման, այդ թվում՝ սպառազինության և ռազմական տեխնիկայի արդիականացման նպատակով տեղի են ունեցել հայ - ռուսական առնվազն 18 հանդիպում:

Ինչ վերաբերում է 2021 թ. նոյեմբերի 15-ից 2022 թ. հուլիսի 19 ընկած ժամանակահատվածում կայացած հանդիպումներին, ապա նկատենք, որ դրանց թիվը

[66] https://hcav.am/wp-content/uploads/2021/11/%D4%B6%D5%AB%D5%B6%D5%BE%D5%A1%D5%AE-%D5%B8%D6%82%D5%AA%D5%A5%D6%80-%D5%A2%D5%A1%D6%80%D5%A5%D6%83%D5%B8%D5%AD%D5%B8%D6%82%D5%B4%D5%B6%D5%A5%D6%80.pdf (էջ 24)
[67] https://www.primeminister.am/hy/press-release/item/2020/11/10/Announcement/

անհամեմատ քիչ է, մասնավորապես՝ ՌԴ բարձրաստիճան զինվորականները, պաշտպանության բնագավառի պաշտոնյաները կատարել են 2 այցելություն Հայաստան՝ 2021 թ. նոյեմբերի 23-ին[68] և 2022 թ. մարտի 30-ին[69], ևս 2[70] անգամ Հայաստանի զինվորական պաշտոնյաները այցելել են Ռուսաստան:

Ռուսաստանի Դաշնության պաշտպանական ոլորտի պաշտոնյաների այցելությունները Հայաստանի Հանրապետություն և պաշտպանության բնագավառում հայ-ռուսական համագործակցության նպատակով այլ հանդիպումները

2021 թ. նոյեմբերի 23-ին ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանն ընդունել է[71] Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի Դաշնության արտակարգ և լիազոր դեսպան Սերգեյ Կոպիրկինին և դեսպանության պաշտպանության հարցերով կցորդ, գնդապետ Իգոր Շերբակովին: Հանդիպման ընթացքում քննարկվել են պաշտպանական ոլորտում հայ-ռուսական դաշնակցային համագործակցությանը, ինչպես նաև տարածաշրջանային անվտանգությանն առնչվող մի շարք հարցեր:

2022 թ. մարտի 30-ին[72] ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանն ընդունել է «ԱրմՀայՏեք» սպառազինության և պաշտպանական տեխնոլոգիաների 3-րդ միջազգային ցուցահանդեսի բացմանը մասնակցելու նպատակով Հայաստանում գտնվող ՀԱՊԿ միացյալ շտաբի պետ, գեներալ-գնդապետ Անատոլի Սիդորովին: Հանդիպման ընթացքում քննարկվել են միջազգային և տարածաշրջանային անվտանգության և ռազմաքաղաքական իրադրության հետ կապված հարցեր, ինչպես նաև ՀԱՊԿ-ում Հայաստանի Հանրապետության նախագահության շրջանակներում առաջարկված առաջնահերթությունների իրականացման ընթացքը:

---

[68] https://mil.am/hy/news/10133
[69] https://mil.am/hy/news/10484
[70] https://mil.am/hy/news/10393, https://mil.am/hy/news/10782
[71] https://mil.am/hy/news/10133
[72] https://mil.am/hy/news/10484

Հայաստանի Հանրապետության պաշտպանական ոլորտի պաշտոնյաների այցելությունները Ռուսաստանի Դաշնություն

2022 թ. փետրվարի 24-ին Ռուսաստանի Դաշնություն կատարած աշխատանքային այցի շրջանակում ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը փետրվարի 25-ին հանդիպել է ՌԴ պաշտպանության նախարար, բանակի գեներալ Սերգեյ Շոյգուի հետ[73]:

Հանդիպման ընթացքում կարծիքներ են փոխանակվել միջազգային և տարածաշրջանային անվտանգության խնդիրների շուրջ: Քննարկվել են հայ-ռուսական երկկողմ և բազմակողմ ձևաչափով ռազմական համագործակցությանն առնչվող մի շարք հարցեր: Քննարկումների ընթացքում անդրադարձ է կատարվել ՀՀ զինված ուժերի արդիականացմանն ու բարեփոխումների ընթացքին:

ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանի գլխավորած պատվիրակությունը Ռուսաստանի Դաշնությունում հունիսի 24-ին մասնակցել է ԱՊՀ մասնակից պետությունների պաշտպանության նախարարների խորհրդի հերթական նիստին[74]:

ՆԱՏՕ-Հայաստան համագործակցություն

Ինչ վերաբերում է ՆԱՏՕ-Հայաստան համագործակցությանը, ապա հիշեցնենք, որ Կառավարության հնգամյա ծրագրի «Արտաքին քաղաքականություն» ենթաբաժնում հիշատակված է ՆԱՏՕ-ի հետ Հայաստանի Անհատական գործընկերության գործողությունների ծրագիրը (ԱԳԳ):

ՆԱՏՕ-Հայաստան Անհատական գործընկերության գործողությունների ծրագրի ժամկետն[75] ավարտվելուց հետո (2019 թ.) մինչ այժմ հայտնի չէ, թե արդյոք ՆԱՏՕ-Հայաստան Անհատական գործընկերության գործողությունների նոր ծրագիր մշակված է, թե ոչ:

[73] https://mil.am/hy/news/10393
[74] https://mil.am/hy/news/10782
[75] https://www.mfa.am/hy/international-organisations/3

Դեռևս 2021 թ-ի դեկտեմբերի 14-ին ՀՔԱ Վանաձորի գրասենյակը դիմեց ՀՀ ԱԳՆ՝ Հյուսիսատլանտյան խորհրդի և Հայաստանի կողմից հաստատված Հայաստան-ՆԱՏՕ ԱԳԳ ծրագրի 2017-2019թթ. փաստաթղթով նախատեսված գործողությունների եւ ՆԱՏՕ-ի հետ Հայաստանի համագործակցության վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով: Ի պատասխան՝ տեղեկացրեցին, որ ներկայումս ՀՀ-ի եւ ՆԱՏՕ-ի միջեւ շարունակում է գործել 2017 թվականին հաստատված 5-րդ Անհատական գործընկերության գործողությունների ծրագիրը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2017 թվականին հաստատված 5-րդ Անհատական գործընկերության գործողությունների ծրագիրը հասանելի չէ որեւէ բաց աղբյուրներում՝ Կազմակերպությունը խնդրեց տրամադրել նշված ԱԳԳ ծրագրի պատճենը: Ի պատասխան ՀՀ ԱԳՆ-ից տեղեկացրեցին, որ ՆԱՏՕ-ում գործող աշխատակարգի համաձայն՝ ԱԳԳԾ-ն հանդիսանում է սահմանափակ հասանելիության ծառայողական փաստաթուղթ և դրա բովանդակությունը հասանելի է միայն ծրագրում ներգրավված ՀՀ շահագրգիռ գերատեսչություններին, չնայած մինչ այդ նախորդ ծրագրերը հարապարակային փաստաթղթեր են եղել: Մասնավորապես՝ ՆԱՏՕ-Հայաստան անհատական գործընկերության գործողությունների 2014-2016 թթ. ծրագիրի շրջանակներում իրականացված գործողությունների վերաբերյալ տեղեկությունները հասանելի են ՀՀ արտաքին գործերի նախարարության պաշտոնական կայքէջում[76]: Հասանելի է եղել նաև 2009-2013 թթ. համար նախատեսված Անհատական գործընկերության գործողությունների ծրագրերի տեքստը, որը, սակայն, հետագայում հեռացվել է ՀՀ ԱԳՆ կայքէջից[77]: 2007 թ. հուշագիրը[78] կնքված Հարավային Կովկասում ՆԱՏՕ-ի գործընկերների, այդ թվում՝ նաև Հայաստանի հետ ևս հասանելի է:

2022 թ. մարտի 3-ին ՀՔԱ Վանաձորի գրասենյակը դիմել է ՀՀ ՊՆ՝ տեղեկություններ հայցելով այն մասին, թե մինչ այժմ ինչ աշխատանքներ են իրականացվել ՆԱՏՕ-ի հետ իրականացվող “Building integrity” նախաձեռնության

[76] https://www.mfa.am/hy/international-organisations/3
[77] http://mfa.am/u_files/file/IPAP%202009-2010-Unclassified_arm.pdf , http://mfa.am/u_files/file/IPAP%202011-2013-ARM-Declassified.pdf , http://geopolitics.am/archives/13570#_ftn16
[78] https://www.nato.int/nato_static/assets/pdf/pdf_publications/20111018_southern_caucasus_partners-ar.pdf

շրջանակներում ՀՀ պաշտպանության և անվտանգության ոլորտում բարեվարքության՝ թափանցիկության, հաշվետվողականության, կոռուպցիոն ռիսկերի նվազեցման ուղղությամբ, ինչ փուլում և ինչ մակարդակում է գտնվում համագործակությունը ՆԱՏՕ-ի և Հայաստանի միջև՝ վերոնշյալ ծրագրի շրջանակներում միաժամանակ տեղեկություն է հայցվել այդ ծրագրի շրջանակներում իրականացված գործողությունների վերաբերյալ: ՀՀ ՊՆ-ից տեղեկացրել են, որ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը միացել է ՆԱՏՕ-ի Building Integrity /բարեվարքության ամրապնդում/ ծրագրին դեռևս 2013 թ-ին: Այդ ժամանակից ի վեր, Building Integrity ծրագիրը դարձել է Հայաստանի և ՆԱՏՕ-ի միջև քաղաքական և պաշտպանական համագործակցության անբաժանելի մասը:

ՆԱՏՕ-ի Building Integrity ծրագրի շրջանակներում ՀՀ ՊՆ-ն անցել է ինքնագնահատում, որի նպատակն է եղել ախտորոշել հիմնական կոռուպցիոն ռիսկերը և մշակել դրանց կանխարգելմանն ուղղված գործիքներ ու մեխանիզմներ: 2020 թվականին ինքնագնահատման զեկույցի և ՆԱՏՕ-ի առաջարկությունների հիման վրա մշակվել է Հայաստանի Հանրապետության պաշտպանության ոլորտում հակակոռուպցիոն ռազմավարության ազգային գործողությունների ծրագրի նախագիծը և դրա իրականացման ժամանակացույցը, որի քննարկումը հետաձգվել է համավարակով և ռազմական գործողություններով պայմանավորված:

Ըստ ՊՆ-ի տրամադրած տեղեկության՝ ՀՀ պաշտպանության նախարարության հակակոռուպցիոն ռազմավարությունը ներկայումս գտնվում է լրամշակման փուլում: Ստեղծված աշխատանքային խմբի կողմից գործընթացի շրջանակներում ուսումնասիրվել են գործող հսկողական համակարգերը, դրանց փոփոխման հնարավորությունները իրականացվող բարեփոխումների շրջանակներում նախանշվել են որոշակի ռիսկեր և ռազմավարական խնդիրներ: Հավելվել է, որ ամփոփված տվյալները դեռևս խիստ նախնական են, աշխատանքների ավարտից հետո փաստաթուղթը կներկայացվի բոլոր շահագրգիռ մարմինների քննարկմանը, ինչի արդյունքում ստացված բոլոր կարծիքների վերջնական ամփոփումից հետո

կկազմվի ՀՀ պաշտպանության նախարարության հակակոռուպցիոն ռազմավարության նախագիծը: Նշենք, որ ՀՀ ՊՆ կողմից տրամադրված փաստաթղթում ներկայացվել են զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված սոցիալական երաշխիքները, արտոնությունները և իրավունքները:

ՆԱՏՕ-ի հետ Հայաստանի հարաբերությունների շրջանակներում տեղի են ունեցել հետևյալ հանդիպումները:

2022 թ. մարտի 17-ին Բրյուսելում ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպել է[79] ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի տեղակալ Միրչա Ջոանայի հետ: ՀՀ ԱԳՆ հաղորդագրության մեջ նշվում է, որ որպես համագործակցության զարգացման արդյունավետ գործիք, կարևորվել է Անհատական գործընկերության գործողությունների ծրագրի իրականացումը: Անդրադարձ է կատարվել հայկական խաղաղապահ ստորաբաժանումների՝ միջազգային խաղաղապահ առաքելություններին ունեցած մասնակցությանը և միջազգային անվտանգության ու կայունության ամրապնդման գործում Հայաստանի ներդրմանը:

Քննարկվել են տարածաշրջանային անվտանգությանը վերաբերող հարցեր, Լեռնային Ղարաբաղում առկա իրավիճակը, Ադրբեջանի կողմից հրադադարի խախտման դեպքերը, ինչպես նաև մտքեր են փոխանակվել Հայաստանի և Թուրքիայի միջև հարաբերությունների կարգավորման գործընթացի շուրջ:

Պպաշտպանական բնագավառում Հայաստանի Հանրապետության պաշտպանական ոլորտի պաշտոնյաների և ԵՄ և այլ երկրներ պաշտոնյաների հանդիպումներ

Նկատենք, որ տարածաշրջանային անվտանգության, պաշտպանական բնագավառում համագործակցության նպատակով ՀՀ պաշտպանական գերատերչության ներկայացուցիչները հանդիպումներ են ունենում նաև եվրոպական և ամերիկյան գործընկերների հետ:

[79] https://www.mfa.am/hy/press-releases/2022/03/17/fm_nato/11354

Մասնավորապես՝ 2022 թ. հունվարի 19-ին ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Արման Սարգսյանն ընդունեց ԱՄՆ եվրոպական հրամանատարության գործընկերության, անվտանգային համագործակցության և տիեզերքի հետ կապված կարողությունների հարցերով տնօրինության ղեկավարի տեղակալ, բրիգադի գեներալ Էդվարդ Վոնի գլխավորած պատվիրակությունը: Ըստ ՀՀ ՊՆ տարածած հաղորդագրության՝ զրուցակիցները քննարկեցին տարածաշրջանային անվտանգությանը և պաշտպանության բնագավառում հայ-ամերիկյան երկկողմ համագործակցությանն առնչվող հարցեր՝ պատրաստակամություն հայտնելով շարունակել գործող ծրագրերի շրջանակներում համագործակցության զարգացումը և նախաձեռնել փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում փոխգործակցության նոր ուղղություններ: Պատվիրակությանն ընդունեց նաև ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետի տեղակալ Առաքել Մարտիկյանը: Ամերիկյան կողմը ներկայացրեց մի շարք առաջարկներ, այդ թվում՝ վիրավոր զինվորների վերականգնողական ծրագրերի, արտակարգ իրավիճակներում արձագանքման համակարգերի զարգացման ուղղությամբ[80]:

2022 թ. մարտի 23-ին ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանն ընդունեց ՀՀ-ում ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպան Լին Թրեյսիին: Հանդիպմանը մասնակցում էր նաև ՀՀ-ում ԱՄՆ դեսպանության պաշտպանության հարցերով կցորդ, գնդապետ Գրեգորի Փայփսը: ՀՀ պաշտպանության նախարարը ԱՄՆ դեսպանին ներկայացրեց հայ-ադրբեջանական սահմանագծին և Լեռնային Ղարաբաղում տիրող իրավիճակը, անդրադարձավ հումանիտար բնույթի խնդիրներին՝ ընդգծելով դրանց շուտափույթ լուծման անհրաժեշտությունը[81]: Կողմերը քննարկեցին նաև պաշտպանության ոլորտում հայ-ամերիկյան համագործակցության ընթացիկ խնդիրներն ու հեռանկարները, կարծիքներ փոխանակեցին միջազգային անվտանգային իրավիճակի և ռազմաքաղաքական զարգացումների շուրջ:

[80] https://mil.am/hy/news/10288
[81] https://mil.am/hy/news/10464

2022 թ. մարտի 31-ին ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանն ընդունեց ՀՀ-ում Ռումինիայի արտակարգ և լիազոր դեսպան Քորնել Իոնեսկուին և ՀՀ-ում հավատարմագրված ռազմական կցորդ, գնդապետ Միրչա Ժուգուրանուին: Հանդիպման ընթացքում քննարկվեցին տարածաշրջանային անվտանգությանն առնչվող հարցեր: Քննարկվեցին նաև երկկողմ և բազմակողմ ձևաչափով համագործակցությանն առնչվող հարցեր[82]:

2022 թ. ապրիլի 6-ին ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանն ընդունեց Հայաստանում Եվրոպայի խորհրդի գրասենյակի ղեկավար Մարտինա Շմիդտին: Հանդիպման ընթացքում քննարկվեցին «Մարդու իրավունքները և կանայք Հայաստանի զինված ուժերում» ծրագրի 2-րդ փուլի ընթացքը և դրա իրականացմանն առնչվող հարցեր: ՀՀ պաշտպանության նախարարը կարևորեց Հայաստան-ԵԽ համագործակցության շրջանակներում զինված ուժերում իրազեկվածության բարձրացման, մարդու իրավունքների, այդ թվում՝ կին զինծառայողների իրավունքների պաշտպանության և զինվորական գործերով իրավական գործընթացների արդյունավետության ամրապնդման, ռազմական կրթության զարգացման ու շարունակականության ապահովման, անձնակազմի հմտությունների և կարողությունների զարգացման ուղղությամբ մինչ օրս կատարված աշխատանքները[83]:

2022 թ. մայիսի 10-ին ՀՀ ՊՆ վարչական համալիրում անցկացվեցին պաշտպանության բնագավառում Հայաստան-Հունաստան-Կիպրոս եռակողմ համագործակցության պլանավորման խորհրդակցություններ:

Ամփոփվեցին Հայաստանի, Հունաստանի և Կիպրոսի միջև երկկողմ և եռակողմ ձևաչափերով իրականացվող ռազմական համագործակցության շրջանակում նախորդ տարիներին կատարված աշխատանքները, քննարկվեցին համագործակցության զարգացման հեռանկարները, տարածաշրջանային անվտանգությանը և միջազգային

[82] https://mil.am/hy/news/10488
[83] https://mil.am/hy/news/10508

զարգացումներին վերաբերող հարցեր: ՀՀ ՊՆ պաշտպանական քաղաքականության և միջազգային համագործակցության վարչության պետը ընդգծեց տարածաշրջանում կայունության և խաղաղության հաստատման ջանքերի անհրաժեշտությունը:

Խորհրդակցությունների ընթացքում ձեռք բերված պայմանավորվածությունների հիման վրա ստորագրվեցին 2022 թ. Հայաստանի և Հունաստանի միջև երկկողմ ռազմական համագործակցության ծրագիրը և Հայաստան-Հունաստան-Կիպրոս եռակողմ ռազմական համագործակցության գործողությունների պլանը (Հայաստանի և Կիպրոսի երկկողմ ռազմական համագործակցության 2022 թ. ծրագիրը ստորագրվել է 2021 թ. հոկտեմբեր ամսին):

Ստորագրված փաստաթղթերով նախատեսվում են մի քանի տասնյակ միջոցառումներ Հայաստանում, Հունաստանում և Կիպրոսում, որոնք ներառում են մարտական պատրաստության միջոցառումներ հատուկ նշանակության ուժերի, խաղաղապահության, ռազմական բժշկության, ինժեներական և այլ ոլորտներում, փորձի փոխանակում տարբեր մասնագիտական ուղղություններով, տեղեկատվության փոխանակում և ռազմական խորհրդակցություններ[84]:

2022 թ. ապրիլի 6-ին ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Միացյալ Թագավորության արտակարգ և լիազոր դեսպան Ջոն Գալագերին: ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը շեշտադրել է իրադրությունը հայ-ադրբեջանական սահմանագոտում իրավիճակի սրումը կանխելու ուղղությամբ միջազգային հանրության կողմից միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտությունը: Դեսպան Գալագերը հաստատեց, որ Միացյալ Թագավորությունն աջակցում է առկա լարվածության թուլացման և խաղաղ ճանապարհով խնդիրների կարգավորման ջանքերին՝ ԵԱՀԿ Մինսկի Խմբի ձևաչափով[85]:

[84] https://mil.am/hy/news/10618
[85] https://mil.am/hy/news/10510

«Եվրոսատորի 2022» սպառազինության միջազգային ցուցահանդեսին մասնակցելու նպատակով Փարիզ մեկնած ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կարեն Բրուտյանի գլխավորած պատվիրակությունը հունիսի 13-ին հանդիպեց Ֆրանսիայի Հանրապետության զինված ուժերի նախարար Սեբաստիան Լեքորնի հետ, որի ընթացքում քննարկվեցին պաշտպանության բնագավառում Հայաստանի և Ֆրանսիայի համագործակցությանն առնչվող հարցեր[86]:

2022 թ. հունիսի 18-ին ՀՀ անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանը հանդիպեց ԱՄՆ պետքարտուղարի և եվրասիական հարցերով տեղակալ Քերրն Դոնֆրիդին: Հանդիպման ընթացքում ԱԽ քարտուղարը ներկայացրեց տարածաշրջանային անվտանգային իրավիճակը և Հայաստանի տեսակետներն առաջնային անվտանգային հարցերի լուծման ուղղությամբ, ինչպես նաև հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորման գործընթացի ընթացքը: Զրուցակիցներն ընդգծեցին երկկողմ հարաբերությունների զարգացման շարունակականության կարևորությունը՝ հիմնված ժողովրդավարական արժեքների վրա[87]:

Ամփոփելով՝ արձանագրում ենք, որ չնայած ՀՀ-ՆԱՏՕ համագործակցության շրջանակներում կատարվում են որոշակի գործողություններ, իրականացվում են հանդիպումներ Եվրոպական միության անդամ երկրների պաշտպանության բնագավառի տարբեր ներկայացուցիչների հետ, այնուամենայնիվ զինված ուժերի սպառազինության և արդիականացման, և ընդհանրապես զինված ուժերի բարեփոխումները ամբողջությամբ իրականացվում են միայն Ռուսաստանի Դաշնության մասնակցությամբ: Նույնիսկ այն դեպքում, երբ ռազմավարական դաշնակից հանդիսացող Ռուսաստանը՝ իր երկիրն ապազգայնականացնելու պատրվակով չհրահրված պատերազմ է սանձազերծում ժողովրդավար, ինքնիշխան պետության՝ Ուկրաինայի դեմ, կատարում պատերազմական հանցագործություններ, խախտում միջազգային բոլոր իրավունքները, Հայաստանը շարունակում է իր զինված

[86] https://mil.am/hy/news/10744
[87] https://factor.am/524290.html

ուժերը բարեփոխումներն իրականացնել նման ավտորիտար ու ագրեսիվ պետության աջակցությամբ և մասնակցությամբ:

Միևնույն ժամանակ, հասկանալի չէ, թե ինչպես կարող է Հայաստանի Հանրապետության զինված ուժերի սպառազինության և ռազմական տեխնիկայի արդիականացումը երաշխավորվել միայն Ռուսաստանի Դաշնության մասնակցությամբ, երբ այն գտնվում է պատերազմական գործողությունների ակտիվ փուլում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ռուսաստանի Դաշնության զինված ուժերում ինչպես և ողջ պետությունում կոռուպցիան ունի համակարգային բնույթ՝ պաշտպանված չեն զինծառայողների իրավունքները, ձևավորված չեն զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության արդյունավետ մեխանիզմներ, ակնհայտ է, որ նման արժեքային հիմքով գործող զինված ուժերի ներկայացուցիչների մասնակցությամբ Հայաստանի զինված ուժերի բարեփոխումներն ի սկզբանե ձախողված են:

Առաջնահերթություն 5

Զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի մեխանիզմների կատարելագործում

Կառավարության հնգամյա ծրագրի համաձայն՝ զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի մեխանիզմների կատարելագործման նպատակով «կյանքի են կոչվելու տարածքային պաշտպանության համակարգի, ակտիվ պահեստազորի և աշխարհազորայինների պատրաստման ծրագրերը: Ներգրավված ուժերի և տեխնիկական նոր լուծումների միջոցով կատարելագործվելու է ՀՀ պետական սահմանի պահպանության համակարգը»:

2021 թ. օգոստոսի 24-ին ՀՀ Ազգային ժողովում Կառավարության հնգամյա ծրագիրը ներկայացնելիս ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտնեց[88], որ առավել մեծ ուշադրություն պետք է դարձնել պահեստազորի պատրաստման աշխատանքներին:

Այդ համատեքստում Կառավարության 2021 թ. օգոստոսի 18-ի որոշմամբ արդեն իսկ հայտարարվել էին պահեստազորի առաջին խմբի առաջին կարգում հաշվառված շարքային, ենթասպայական և սպայական կազմերի պահեստազորայինների վարժական հավաքներ՝ երեք ամիս ժամկետով՝ 2021 թվականի օգոստոսի 25-ից մինչև նոյեմբերի 25-ը:[89]

2021 թ. սեպտեմբերի 3-ին Կառավարության որոշմամբ հայտարարվեցին[90] պահեստազորի առաջին խմբի առաջին կարգում հաշվառված շարքային, ենթասպայական և սպայական կազմերի պահեստազորայինների վարժական հավաքներ երեք ամիս ժամկետով՝ 2021 թ. սեպտեմբերի 15-ից մինչև դեկտեմբերի 15-ը[91]: 2021 թ. նոյեմբերի 18-ին հայտարարվեցին պահեստազորի առաջին խմբի առաջին կարգում հաշվառված շարքային, ենթասպայական և սպայական կազմերի պահեստազորայինների վարժական հավաքներ՝ մեկ ամիս ժամկետով՝ 2021 թվականի նոյեմբերի 19-ից մինչև դեկտեմբերի 19-ը[92]:

2022 թ. առաջին կիսամյակի ընթացքում ՀՀ կառավարության կողմից չորս անգամ հայտարարվել են վարժական հավաքներ: Մասնավորապես՝ առաջին անգամ եռամսյա վարժական հավաքներ անցկացվել են 2022 թ. հունվարի 15-ից մինչև ապրիլի 15-ը ժամանակահատվածում[93]: Երկրորդ անգամ՝ 2022 թ. ապրիլի 1-ից մինչև հունիսի 30-ը ժամանակահատվածում[94]: Երրորդ անգամ՝ 2022 թ. ապրիլի 15-ից մինչև հունիսի 15-ը՝ ժամանակահատվածում[95]: Եվ չորրոդ անգամ՝ հայտարարվել են եռամսյա

[88] https://epress.am/2021/08/24/1733-6.html
[89] https://e-gov.am/gov-decrees/item/36751/
[90] https://www.e-gov.am/gov-decrees/item/34698/
[91] https://www.e-gov.am/gov-decrees/item/36820/
[92] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=157784
[93] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=159525
[94] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=160890
[95] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=160867

վարժական հավաքներ 2022 թ. օգոստոսի 1-ից մինչև հոկտեմբերի 30-ը ընկած ժամանակահատվածում[96]:

2022 թ. հունիսի 21-ին ՀՀ իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում (e-draft.am) տեղադրվեց նախագիծ[97] «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օերնքում փոփոխություններ կատարելու մասին: Մասնավորապես՝ սահմանվում էր վարժական հավաքներից ազատման կարգը, ազատվողներին ներկայացվող պահանջները, ինչպես նաեւ առաջարկվում է, որ «վարժական հավաքներից ազատումն իրականացվում է՝ խաղաղ ժամանակ տնտեսության բնականոն գործունեությունը ապահովելու և կազմակերպությունների անխափան աշխատանքը չխաթարելու նպատակով»: Սահմանվում է նաև, որ «Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով վարժական հավաքներից կարող են ազատվել կազմակերպությունում (բացառությամբ՝ զորահավաքային առաջադրանքներ ունեցող կազմակերպությունների) աշխատող, համապատասխան մասնագիտություն ունեցող կամ պաշտոն զբաղեցնող այն քաղաքացիները, որոնց մասնակցությունը վարժական հավաքներին կխաթարի կազմակերպության բնականոն գործունեությունը»:

ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը հանրային հեռուստաընկերության եթերում նշեց, որ վարժական հավաքների միջոցով ապահովվելու է քաղաքացիներին համակարգ վերադարձնելու խնդրի լուծման հարցը, քանի որ, ըստ նախարարի, զորացրվածները տնական ժամանակ առնչություն չեն ունենում զինվորական ծառայության հետ, ինչը խնդիր է: Նախարարը հայտնեց, որ կազմավորվելու է տարածքային պաշտպանութոյան առանձին միավոր, որը պատերազմի դեպքում համալրվելու է և կատարելու է առաջադրված խնդիրները:

Ի դեպ, 2021 թ. ապրիլի 19-ին փոփոխություն կատարվեց «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի[98] 57-րդ հոդվածում[99]:

[96] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=164587
[97] https://www.e-draft.am/projects/4469/about
[98] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=164987

Մասնավորապես՝ պահեստազորի առաջին խմբում հաշվառվածների սահմանային տարիքը շարքային, կրտսեր ենթասպայական և ավագ ենթասպայական կազմերի պահեստազորայինների համար սահմանված էր մինչև 48 տարեկանը, որը փոխարինվեց 53 տարեկանով, իսկ պահեստազորի երկրորդ խմբում հաշվառվածների համար 50 տարեկանը փոխարինվեց 53 տարեկանով, համապատասխանաբար առաջին խմբի կրտսեր սպայական կազմի պահեստազորայինների համար սահմանված 50 տարեկանը փոխարինվեց 55-ով, երկրորդ խմբի համար՝ 52 տարեկանը փոխարինվեց 57-ով, առաջին խմբի ավագ սպայական կազմի «մայոր» և «փոխգնդապետ» զինվորական կոչումներ ունեցող պահեստազորայինների համար 55 տարեկանը փոխարինվեց 58-ով, երկրորդ խմբի համար՝ 58 տարեկանը փոխարինվեց 60-ով, առաջին խմբի ավագ սպայական կազմի «գնդապետ» զինվորական կոչում ունեցող պահեստազորայինների համար 58 տարեկանը փոխարինվեց 60-ով, երկրորդ խմբի համար՝ 60 տարեկանը փոխարինվեց 63-ով։

Դեռևս 2021 թ-ին վարժական հավաքների կազմակերպման և անցմացման ընթացում առաջացան մի շարք խնդիրներ ոչ միայն կազմակերպական գործընթացի, այլև պահեստազորայինների անվտանգության ապահովման հետ կապված։ Մասնավորապես՝ 2021 թ-ին մեկ պահեստազորայինի մահվան դեպքը որակվեց որպես «մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտում, որը առաջացրել է ծանր հետևանքներ»։ Զինծառայողը մահացել էր ծառայակցի կողմից արձակված գնդակից, իսկ մյուս ծառայակիցը ստացել էր մարմնական վնասվածք։

Իսկ, 2022 թ. մայիսի 20-ին վարժական հավաքների զորակոչված պահեստազորային զինծառայող «փսիխոտիկ խանգարում?» ախտորոշմամբ ընդունվել է հոսպիտալի հոգեբուժական բաժանմունք, ապա մոտ երկու շաբաթ անց՝ հունիսի 1-ին «Ալկոհոլային էնցեֆալոպաթիա» ախտորոշմամբ տեղափոխվել ՀՀ ԱՆ նարկոդիսպանսեր և ութ օր անց՝ հունիսի 9-ին ինքնասպանություն է գործել՝ ցած նետվելով նույն կլինիկայի 3-րդ հարկից։

[99] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=152084

Ակնհայտ է, որ մինչ վարժական հավաքներին անձանց ներգրավելը, ՀՀ պաշտպանության նախարարության համապատասխան ստորաբաժանումները չեն իրականացնում պահեստազորայինների առողջական վիճակի պատշաճ և համալիր բուժզննություն:

2020 թ. պատերազմական գործողությունների մեկնարկից սկսած մինչ 2022 թ. հուլիսն ընկած ժամանակահատվածում ՀՔԱ Վանաձորի գրասենյակ են դիմել զորահավաքային զորակոչի շրջանակներում զորակոչված և պատերազմից հետո՝ 2021 թ-ից սկսած վարժական հավաքների կանչված պահեստազորային զինծառայողներ, ովքեր ահազանգել են առողջական խնդիրների ոչ պատշաճ զննության իրականացման մասին, ու առողջական խնդիրներով զորահավաքային կամ վարժական հավաքներին ներգրավվելու մասին:

Ակնհայտ է, որ վարժական հավաքների կազմակերպման և անցկացման փուլում ՀՀ պաշտպանության նախարարությունը և համապատասխան ստորաբաժանումները պատշաճ կերպով պետք է ուշադրություն դարձնեն պահեստազորայինների առողջական վիճակի համալիր զննությանը, զինվորական ծառայությանն ընդգրկվելու համար պատշաճ կարողությունների բարձրացմանը, պատրաստվածությանը, զինծառայողների կյանքի և առողջության անվտանգության պահպահմանն ուղղված միջոցներին:

Առաջնահերթություն 6

Ռազմական կրթության որակի էական բարձրացում

Կառավարության հնգամյա ծրագրի սույն առաջնահերթությամբ սահմանվում է, որ «ռազմական կրթության և գիտության զարգացումը լինելու է Կառավարության գործունեության առանցքային ուղղություններից մեկը: Վերանայվելու են Հայաստանի Հանրապետության զինված ուժերում օպերատիվ, մարտական և զորահավաքային պատրաստության գործընթացները, որոնք համապատասխանեցվելու են Զինված

ուժերին առաջադրված խնդիրներին և դրանց իրականացման պահանջներին: Ռազմական գործողությունների բնույթի կերպափոխման, տեխնիկական ու տեխնոլոգիական առաջընթացի, տեղեկատվական ու հոգեբանական ազդեցությունների ավելացման պայմաններում ռազմական կրթությունը լինելու է ապագայամետ՝ նախապատրաստելով հնարավոր պատերազմներին պատրաստ արհեստավարժ զինվորականներ: Կառավարությունը հետամուտ է լինելու նաև ռազմական գիտության զարգացմանը, որի շրջանակներում վերանայվելու են պատերազմավարման հիմնադրույթները, մարտական գործողությունները պլանավորելու և վարելու ձևերը»:

2022 թ. ապրիլի 11-14-ը ՀՀ ՊՆ պաշտպանական ազգային հետազոտական համալսարանում անցկացվեց փորձագիտական գիտակիրառական քննարկում, որին մասնակցեցին ԱՄՆ պաշտպանության դեպարտամենտի «Մերձավոր Արևելք-Հարավային Ասիա» ռազմավարական հետազոտությունների կենտրոնի պատվիրակության անդամները՝ կենտրոնի ղեկավար, դոկտոր, պրոֆեսոր Ռոջեր Կանգասի գլխավորությամբ: Քննարկումների շրջանակում պատվիրակության անդամները զեկույցներ և դասախոսություններ ներկայացրեցին միջազգային և տարածաշրջանային անվտանգության, ժամանակակից պատերազմների, ամերիկյան ռազմակրթական համակարգի և այլ թեմաների վերաբերյալ[100]:

2022 թ. հունիսի 6-ին ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը հանրային հեռուստաընկերության եթերում հայտնեց, որ նախատեսվող բարեփոխումների շրջանակներում նախատեսվում է ռազմաուսումնական հաստատության որակի, ձևի և բովանդակության փոփոխություն, մասնավորապես՝ Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարանը վերափոխվելու է ռազմական ակադեմիայի: Այն իր մեջ ներառելու է երկու ինստիտուտ՝ ռազմաավիացիոն և համազորային: Բացի դրանից, միավորված ակադեմիայում լինելու է առանձին

[100] https://mil.am/hy/news/10537

ֆակուլտետ, որն առավելապես ուղղված է լինելու սպաների պրոֆեսիոնալիզմի բարձրացմանը[101]: Այսպիսով, ըստ նախարարի, ներդրվելու է կրթական մոդել՝ հաշվի առնելով ռազմական ոլորտում համաշխարհային արդի ձեռքբերումները և համապատասխանեցնելով դրանք Հայաստանի պայմաններին և հաշվի առնելով 44-օրյա պատերազմի փորձը: Ըստ ՀՀ պաշտպանության նախարար Ս.Պապիկյանի՝ կուրսանտները ստանալու են բարձրակարգ կրթություն, որն իր կրթական մակարդակով չի տարբերվելու ՀՀ այլ բուհերից: Նախատեսված է օտար երկրների ուսուցում, այդ թվում՝ Հայաստանի հարևան երկրների լեզուները:

Ի դեպ, ռազմական վերլուծաբանները և փորձագետները բազմիցս նշել են, որ վերջին տարիներին ռազմաուսումնական հաստատություններ դիմողների թվաքանակը նվազում է դեռևս 2015 թ-ից սկսած[102]:

Ըստ հասանելի տվյալների՝ 2020-2021 թթ. ուսումնական տարում ՀՀ ռազմաուսումնական հաստատություններ դիմել է 49 հոգի, այդ թվում՝ 2 աղջիկ[103]: ընդ որում՝ նրանցից 7-ը դիմել է Արմենակ Խանփերյանցի անվան ռազմական ավիացիոն համալսարան, մյուսները՝ Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարան եւ ՌԴ-ի հաստատություններ:

2021 – 2022 թթ ուսումնական տարվա դիմորդների թվի վերաբերյալ տվյալներ առկա չեն, սակայն 2022 թ. հուլիսի 6-ին ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը ԱԺ-ում իր ելույթի ժամանակ հայտնեց որ ռազմաուսումնական հաստատություններ դիմորդների թիվը կրկնապատկվել է[104]:

Ռազմաուսումնական հաստատությունների դիմորդների թվի աճ գրանցելու նպատակով Կառավարությունը որպես խրախուսանք ներդրեց զինծառայողներին բնակարանային ապահովության նոր պայմաններ: Հիշեցնենք, որ 2022 թ. հուլիսի 7-ին ՀՀ Ազգային ժողովը երկրորդ ընթերցմամբ ընդունեց կառավարության կողմից ներկայացված «Զինվորական ծառայության և զինծառայողի մասին» ՀՀ օրենքում

[101] https://www.1lurer.am/hy/tv_program/PapikyanGhazaryan0606
[102] https://168.am/2021/07/03/1543129.html
[103] https://armtimes.com/hy/article/192780
[104] https://www.youtube.com/watch?v=IPKw9-orfzc

փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծը[105], որի համաձայն 20 տարի ժամկետով պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու համար պայմանագիր կնքած, ռազմաուսումնական հաստատությունն ավարտած զինծառայողին անհատույց օգտագործման իրավունքով հատկացվում է բնակարան:

Զինված ուժերում կուրսանտների և սպայական կազմի կրթության մտահոգիչ որակի մասին վկայում են զինված ուժերում դեռևս շարունակվող կանոնադրային հարաբերությունների խախտման դեպքերը, քրեական բարքերը, մահվան դեպքերի առկայությունը ոչ մարտական պայմաններում:

Առաջնահերթություն 7

Տեղեկատվական անվտանգության և կիբեռանվտանգության ոլորտի բարեփոխում

Կառավարության հնգամյա ծրագրի սույն առաջնահերթությամբ սահմանվում է կատարելագործել օրենսդրական դաշտը՝ տեղեկատվական սպառնալիքների և մարտահրավերների մշտադիտարկման, վերլուծության, տեղեկատվական հակազդման և պայքարի միջոցառումների արդյունավետ իրականացման նպատակով:

2021 թ. նոյեմբերի 25-ին ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտարարեց[106] մրցույթ՝ «Հայտեք» կիբեռանվտանգության կենտրոնի հետ համատեղ զինված ուժերի կարիքների համար տեղեկատվական հաղորդակցային տեխնոլոգիաների և բարձր տեխնոլոգիաների մասնագետների արդի տեխնոլոգիաների խմբում զինվորական ծառայության նշանակելու ընտրության նպատակով: Մրցույթին կարող էին մասնակցել 2021 թ. ձմեռային զորակոչին ենթակա

[105] http://www.parliament.am/draftreading_docs8/K-291_DR2.pdf
[106] https://mil.am/hy/news/10145

զորակոչիկները՝ ծրագրավորում, ցանցային/համակարգային ադմինիստրացիա, կիբեռանվտանգություն մասնագիտություններով:

Նույն մրցույթը հայտարարվեց[107] նաև 2022 թ. մայիսի 16-ին՝ 2022թ. ամառային զորակոչին ենթական զորակոչիկների համար:

2022 թ. մայիսի 31-ին ՀՀ պաշտպանության նախարարությունը պաշտպանական համակարգում բարձր տեխնոլոգիական լուծումների ստեղծման, դրանց արդյունավետ կիրառման, ինչպես նաև զորակոչիկների կարողությունները պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ընթացքում առավել արդյունավետ օգտագործելու նպատակով հայտարարեց մրցույթ[108] 2022 թ. ամառային զորակոչի ենթակա այն զորակոչիկների համար, ովքեր մասնագիտացած են մեքենայական ուսուցում, տվյալների ճարտարագիտություն, տվյալների վերլուծություն և վիճակագրություն ոլորտներում: Մրցույթը հաղթահարած զորակոչիկները պետք է ծառայության անցնեն «1991» ստորաբաժանման արհեստական բանականության խմբում:

Ներկայիս աշխարհաքաղաքական պայմաններում տեղեկատվական և կիբեռանվտանգության ոլորտի զարգացումը կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր երկրի պաշտպանության և անվտանգության ոլորտում, սակայն դեռևս հանրությանը հայտնի չէ, թե ինչ ծավալներով է Հայաստանում զարգանում տվյալ ոլորտը և արդյոք այդ ուղղությամբ ձեռնարկված քայլերը բավարար են երկրի անվտանգության ապահովման համար:

Առաջնահերթություն 8

Զինված ուժերի բարոյահոգեբանական պատրաստության մակարդակի բարձրացմանն ուղղված ծրագրերի իրականացում

[107] https://mil.am/hy/news/10639
[108] https://www.1in.am/3119955.html

Կառավարության հնգամյա ծրագրի սույն առաջնահերթությամբ ենթադրվում է իրականացնել ծրագրեր, որոնց նպատակն է «զարգացնել զինծառայողի և զինվորի անհրաժեշտ բարոյական հատկությունները, ամրապնդել հոգեբանական կայունությունը և ակտիվ մարտական գործողություններ վարելու պատրաստվածությունը, կատարելագործել զինվորական հոգեբանների ինստիտուտը, ինչպես նաև բարելավել բանակում տեղեկատվական, մշակութային և ժամանցային միջոցառումների բնույթը»:

2022 թ. փետրվարի 28-ի Կառավարության N 234-Ա որոշման[109] հավելվածով հրապարակվեց զեկույց[110] «ՀՀ կառավարության ծրագրի (2021-2026 թթ.) 2021 թվականի կատարման ընթացքի և արդյունքների զեկույցի մասին», որտեղ ներկայացվեց, որ «անձնակազմի բարոյահոգեբանական ապահովման մակարդակի, կարգապահության, մարդու իրավունքների մակարդակի բարձրացման նպատակով Պաշտպանության նախարարության ռազմական ոստիկանությունն ամենօրյա ռեժիմով պրոֆիլակտիկ և կանխարգելիչ միջոցառումներ է իրականացրել զորամասերում զինծառայողների միջև կանոնագրքային փոխհարաբերությունների խախտման դեպքերը բացառելու, ինչպես նաև զորամասերում հանցագործությունների նախականխման, կանխման, խափանման և բացահայտման ուղղությամբ»: Զեկույցում նաև անդրադարձ կատարվեց անձնակազմի բարոյահոգեբանական վիճակի վրա բացասաբար ազդող հանգամանքների վերաբերյալ ուսումնասիրություններին, որոնք իրականացվել են 2021 թ.-ին 50 զորամասեր կատարած այցերի ժամանակ:

Ցավոք, զինված ուժերում բարոյահոգեբանական մթնոլորտի բարձրացմանն ուղղված ծրագրերի վերաբերյալ տեղեկություններ հայտնի չեն: Բարոյահոգեբանական պատրաստության թեմայի մասին ՀՀ պաշտպանության նախարարության կայքում տարածված հաղորդագրություններում անդրադարձ է կատարվում միայն ՀՀ պաշտպանության նախարարի կատարած այցերի ժամանակ անձնակազմի բարոյահոգեբանական վիճակին ծանոթանալու մակարդակով:

[109] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=160648
[110] http://www.parliament.am/draft_docs8/176_2022_Karavarityan_Zekuyts.pdf

Այսպիսով, որքան էլ կարևոր է զինված ուժերում բարոյահոգեբանական պատրաստության մակարդակի բարձրացումը, այնուամենայնիվ այդ ուղղությամբ իրականացված գործողությունների մասին տեղեկությունները բացակայում են, և դեռևս հայտնի չէ, թե ինչ քայլեր են կատարվել այս ուղղությամբ: Սակայն ակնհայտ է, որ առնվազն զինված ուժերում քրեական հանցագործությունների վերաբերյալ տեղեկությունները վկայում են այն մասին, որ բարոյահոգեբանական վիճակը մնում է խիստ մտահոգիչ:

Առաջնահերթություն 9

Զինվորական ծառայության գրավչության բարձրացում՝ աշխատավարձային և սոցիալական երաշխիքների նոր քաղաքականության միջոցով

Սույն առաջնահերթության վերաբերյալ Կառավարության հնգամյա ծրագրում նշվում է, որ «զինծառայողների և նրանց ընտանիքների սոցիալական պաշտպանության բարձրացումը մշտապես եղել և լինելու է Կառավարության ուշադրության կենտրոնում»: Այդ նպատակով նախատեսվում է «մեծացնել զինծառայողների նյութական և սոցիալական ապահովման երաշխիքները, կատարելագործել զինծառայության գրավչության և զինծառայողի հեղինակության բարձրացման մեխանիզմները»: Կառավարության հնգամյա ծրագրի սույն կետում նաև նշվում է, որ նոր թափ են ստանալու «զինծառայողների աշխատավարձերի և այլ վճարների բարձրացումը, բնակարանային ապահովման ուղղությամբ Կառավարության հնգամյա ծրագրերը, պատերազմի հետևանքներն իրենց վրա կրող զինծառայողների սոցիալական և առողջապահական ծրագրերը»:

Դեռևս 2021 թ. նոյեմբերի 1-ին ՀՀ ԱԱԾ տնօրենի տեղակալ Արամ Հակոբյանը ԱԺ պաշտպանության և անվտանգության ու Ֆինանսավարկային և բյուջետային

հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստում հայտարարեց[111], որ ԱԱԾ-ն նախատեսում է սահմանապահ ծառայություն իրականացնող պայմանագրային զինծառայողների աշխատավարձը բարձրացնել՝ 160 հազար դրամից հասցնելով մոտ 210-220 հազար դրամի: Ա. Հակոբյանը նաև հատնեց, որ սահմանապահ զորքերում պայմանագրային զինծառայողների աշխատավարձը բավականին ցածր է, ինչի պատճառով նրանք դիմում են ներկայացնում աշխատանքից ազատման մասին:

2022 թ. հուլիսին «Հայկական ժամանակի» հետ զրույցում ռազմական փորձագետ Արծրուն Հովհաննիսյանը նշեց, որ բանակի խնդիրը կայանում է նրանում, որ «բանակը չի առաջարկում այնպիսի աշխատավարձ, որը կլինի մրցունակ ու կկարողանա լավագույններից ընտրել որպես պայմանագրային զինծառայող: Բանակը կիսագրագետ, ֆիզիկապես ոչ պատրաստված մարդկանց ընդունում է որպես պայմանագրային զինծառայող, տվյալ անձն էլ սահման պաշտպանելն ընդունում է զուտ աշխատանք՝ իր ընտանիքը պահելու համար: Այդպիսի մարդիկ պատրաստ չեն բանակ ու երկիր պաշտպանելու, որովհետև վերջին անգամ գիրք են կարդացել 7-րդ դասարանում, հայկական սերիալներ են նայել, որտեղից էլ սերտել են դավաճանություն, հանցագործություն, գողություն, սեռական բռնություններ և այլն»[112]:

2022 թ. հուլիսի 7-ին ՀՀ Ազգային ժողովը երկրորդ ընթերցմամբ ամբողջությամբ ընդունեց «Զինվորական ծառայության և զինծառայողի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելուը մասին օրենքի նախագիծը[113]:

Ըստ այդմ, «պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու պայմանագրերը, զինվորական ծառայության ժամկետները կնքվում են ռազմաուսումնական հաստատություններ ընդունված քաղաքացիների հետ՝ տվյալ ռազմաուսումնական հաստատությունում ուսումնառության և հետուսումնական 20 տարի ժամկետով, որը պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասով ներառում է նաև ուսումնառության ժամանակահատվածը՝ որպես պարտադիր զինվորական ծառայություն, իսկ ուսումնառության ավարտից

[111] https://www.lragir.am/2021/11/01/678335/
[112] https://armtimes.com/hy/article/240558
[113] http://www.parliament.am/draftreading_docs8/K-291_DR2.pdf

հետո՝ որպես հետուսումնական պայմանագրային զինվորական ծառայություն»: Նշենք, որ նախկինում գործող օրենքով պայմանագրերը կնքվում էին 10 տարի ժամկետով:

Բացի այս փոփոխությունից, 2022 թ. նույն օրենքով սահմանվեց, որ 20 տարի ժամկետով պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու համար պայմանագիր կնքած, ռազմաուսումնական հաստատությունն ավարտած և ՀՀ պաշտպանության նախարարության համակարգում կամ ՀՀ ԱԱԾ սահմանպահ զորքերում սպայական պաշտոնի նշանակված սպայական կազմի զինծառայողին անհատույց օգտագործման իրավունքով հատկացվում է բնակարան: Սույն բնակարանների օգտագործումը և տիրապետումը զինծառայողի համար ներառում է բնակարանը վարձակալությամբ տրամադրելու իրավունքը: Բնակարանը անհատույց սեփականության իրավունքով տրվում է զինծառայողներին 20 տարի ժամկետով կնքված պայմանագրի ավարտից հետո, ինչպես նաև մինչև պայմանագրի ժամկետը լրանալը առողջական վիճակի պատճառով զինվորական ծառայությունից վաղաժամ արձակվելու և օրենքով սահմանված կարգով հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու դեպքում: Այլ հիմքերով պայմանագիրը վաղաժամկետ լուծելու կամ ծառայությունից արձակվելու դեպքում և բնակարանի նկատմամբ դադարում է զինծառայողի անհատույց օգտագործման իրավունքը:

Ծրագրով նախատեսվում է զինծառայողներին 3 սենյականոց (մինչև 90 մ^2) բնակարանների տրամադրում Երևան քաղաքում[114]:

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծն ՀՀ ԱԺ արտահերթ նիստում 2022թ. հուլիսի 6-ին ներկայացնելիս ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը հայտնեց, որ բնակարան ստանալու իրավունքից կարող են օգտվել նաև ՀՀ-ի հետ համագործակցող օտարերկրյա ուսումնական հաստատությունների ուսանողները այն դեպքում, եթե վերջիններս Հայաստանում ապրելով քննություններ են հանձնում և մեկնում արտերկրում ուսանելու: Իսկ այն

[114] https://www.armtimes.com/hy/article/240369

դեպքերում, երբ անձը ՀՀ-ից չի մեկնել, այլ ապրել է որևէ երկրում և սովորել այնտեղի ռազմաուսումնական հաստատությունում, ապա այս նախագծի կարգավորումը նրանց չի վերաբերում»:

Ինչ վերաբերում է զինծառայողների սոցիալական այլ երաշխիքներին, ապա նշենք, որ 2021 թ. դեկտեմբերի 21-ին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Նարեկ Մկրտչյանը մամուլի ասուլիսի ընթացքում նշեց, որ կառավարությունը հաստատել է մի ծրագիր, որով աջակցություն կցուցաբերվի 90-ականներից ի վեր տեղի ունեցած ռազմական գործողությունների հետևանքով հաշմանդամություն ձեռք բերած անձանց: Աջակցությունն ուղղված է վերջիններիս աշխատանքով ապահովելուն: Ըստ նախարարի՝ նախ գնահատվելու են նրանց կարիքները, հստակեցվելու են, թե կոնկրետ ինչ ուղղություններով հմտությունները զարգացնելու անհրաժեշտություն կա: Այնուհետև նրանք ներգրավվելու են վերապատրաստման ու հմտությունների զարգացման տարբեր ծրագրերում: Արդյունքում՝ համագործակցելով գործընկեր կազմակերպությունների, գործատուների հետ՝ վերջիններիս աջակցություն է տրամադրվելու աշխատանք գտնելու հարցում: Նախարար նշեց, որ այս ծրագրն ուղղված է ինչպես հաշմանդամություն ձեռք բերած անձանց աշխատանքի ընդունելու պարագայում միջավայրի հարմարեցմանը, այնպես էլ աշխատավարձից հաշվարկված եկամտային հարկի մինչև 100 հազար դրամ փոխհատուցմանը[115]:

2022 թ. մարտի 22-ին ԱԺ պաշտպանության և անվտանգության հարցերի հանձնաժողովի այսօրվա նիստում քննարկվեց «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին նախագիծը, որը վերաբերում է կրթության իրավունքի իրացմանը: Նախագիծը ներկայացվեց «Պատիվ ունեմ» խմբակցության պատգամավոր Տիգրան Աբրահամյանի կողմից, ով նշեց, որ գործող օրենքով սահմանվում է, որ անվճար կրթության իրավունքից կարող է օգտվել միայն մարտական խնդիր կատարելու հետևանքով

115 https://shamshyan.com/hy/article/2021/12/27/1203751/?fbclid=IwAR2Lca18HRHiOkDGaU_anax6CG139nhSLzVLprAzX17nWZMKXYuLsXL9mWM

առաջին կամ երկրորդ կարգի հաշմանդամություն ստացած պարտադիր ժամկետային զինծառայողը։ Առաջարկվող փոփոխությամբ այս դրույթը կվերաբերի ոչ միայն հաշմանդամություն ձեռք բերած անձանց, այլև պայմանագրային զինծառայողներին, այդ թվում՝ սպաներին։ Հիմնավորելով՝ նա նշեց, որ կա իրավիճակ, երբ կադրային սպան պայմանական 37-38 տարեկանում հիմնականում ռազմական մասնագիտություն է ստացել և քաղաքացիական կյանք մտնելու համար կարիք կա նրանց ապահովելու կրթությամբ[116]։ Նախագիծը սակայն դեռևս չի ընդունվել։

Ակնհայտ է, որ բնակարանային ապահովության մասով օրենսդրական փոփոխությունը ծավալներով էապես տարբերվում է նախկինում գործող դրույթներից, միևնույն ժամանակ, ակնհայտ է, որ Կառավարության կողմից պրոֆեսիոնալ բանակի ստեղծման հիմքում որպես շահագրգռող գործոն դրվում է զինծառայողների ֆինանսական ապահովությունը։ Մինչդեռ, ֆինանսական ապահովության հետ մեկտեղ պետք է կարևորվի զինված ուժերի բարեփոխումների անհրաժեշտության նկատմամբ գաղափարական մոտեցումը։

Առաջնահերթություն 10

Զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական և քաղաքացիական վերահսկողության կատարելագործում, զինված ուժերի կարգապահության խթանում, զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանություն

Կառավարության հնգամյա ծրագրի սույն առաջնահերթությամբ, բացի Զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական և քաղաքացիական վերահսկողության կատարելագործումից, զինված ուժերի կարգապահության խթանումից և զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանությունից, նախատեսվում է նաև առավելագույն ջանքերի գործադրում ոչ կանոնադրական հարաբերությունների դեպքերը բացառելու ուղղությամբ։

[116] https://factor.am/487183.html

Կառավարության ծրագրի 2021 թ. կատարման ընթացքի և արդյունքների մասին ՀՀ կառավարության 2022 թ. փետրվարի 28-ին հրապարակված զեկույցում[117] ներկայացվեց, որ 2021 թ. ԱՄՆ-ն Հայաստանին է հատկացրել շուրջ 35 մլն ԱՄՆ դոլարի օժանդակություն՝ ուղղված ժողովրդավարության, մարդու իրավունքների և կառավարման ոլորտում իրականացվող ծրագրերին, տնտեսական զարգացմանը, առողջապահությանը, հումանիտար աջակցմանը և կրթությանը:

Նախորդ տեղեկանքում անդրադարձանք 2016 թ. ներկայացված «Ազգ-բանակ հայեցակարգին», որում կարևորվեց զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական հսկողության հաստատումը[118]:

Այնուամենայնիվ, ՀՀ-ում դեռևս ձևավորված չեն զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության արդյունավետ մեխանիզմներ:

ՀՀ պաշտպանության նախարարությունը պարբերաբար տարածում է հաղորդագրություններ զինված ուժերում մարդու իրավունքների ուսուցմանն ուղղված միջոցառումների, քննարկումների և դասընթացների վերաբերյալ:

Այսպես. ըստ ՀՀ պաշտպանության նախարարության[119]՝ 2022 թ. դեկտեմբերի 15-ին ՀՀ ՊՆ մարդու իրավունքների և բարեվարքության կենտրոնի նախաձեռնությամբ ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության անձնակազմի համար կազմակերպվել է «Կյանքի իրավունք» թեմայով վերապատրաստման դասընթաց-քննարկում: Մարդու իրավունքների պաշտպանության Ազգային ռազմավարության 2020-2022 թթ. գործողությունների ծրագրի շրջանակներում անցկացված դասընթացը վարել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության ներկայացուցչի գրասենյակի ղեկավար Լիպարիտ Դրմեյանը[120]:

2022 թ. հունվարի 17-ին ՄԻՊ ազգային ռազմավարության գործողությունների ծրագրի շրջանակներում ՀՀ ՊՆ մարդու իրավունքների և բարեվարքության կենտրոնի պետ, գնդապետ Գևորգ Մարտիրոսյանը այցելել է ՊՆ զորակոչային և

---

[117] http://www.parliament.am/draft_docs8/176_2022_Karavarityan_Zekuyts.pdf

[118] https://hcav.am/wp-content/uploads/2021/11/%D4%B6%D5%AB%D5%B6%D5%BE%D5%A1%D5%AE-%D5%B8%D6%82%D5%AA%D5%A5%D6%80-%D5%A2%D5%A1%D6%80%D5%A5%D6%83%D5%B8%D5%AD%D5%B8%D6%82%D5%B4%D5%B6%D5%A5%D6%80.pdf (էջ 44)

[119] https://mil.am/hy/news/10205

[120] https://mil.am/hy/news/10205

զորահավաքային համալրման Երևանի թիվ 4 տարածքային ստորաբաժանում: Այցելության նպատակն էր կյանքի իրավունքի և խոշտանգումների արգելքի վերաբերյալ զորակոչիկների իրազեկվածության բարձրացումը, ինչպես նաև տեղեկացումը ՊՆ մարդու իրավունքների և բարեվարքության կենտրոնի գործունեության մասին[121]:

2022 թ. մայիսի 19-ին Վրաստանի պաշտպանության ուժերի պատրաստության և ռազմական կրթության ու պաշտպանության նախարարության անձնակազմի կառավարման վարչությունների պատվիրակության անդամներն այցելել են ՀՀ պաշտպանության նախարարություն, հանդիպել ՀՀ ՊՆ մարդու իրավունքների և բարեվարքության ամրապնդման կազմակերպման կենտրոնի պետ, գնդապետ Գևորգ Մարտիրոսյանի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են զինված ուժերում բարեվարքության ամրապնդման ուղղությամբ կատարված աշխատանքները, հետագա քայլերը և համագործակցության հնարավորությունները: Պատվիրակության անդամներն այցելել են նաև ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարան, ծանոթացել «Լավ կառավարում և բարեվարքության ամրապնդում» առարկայի դասավանդման ծրագրի ներդրման գործընթացին և մեթոդաբանությանը[122]:

2022 թ. մայիսի 20-ին զինծառայողների իրավունքների և պարտականությունների վերաբերյալ վարժարանի սաների իրազեկվածության բարձրացման նպատակով ՀՀ պաշտպանության նախարարի իրավական հարցերով օգնական Մանե Մարկոսյանը և ՀՀ ՊՆ մարդու իրավունքների և բարեվարքության կազմակերպման կենտրոնի ներկայացուցիչներն այցելել են Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան: Հանդիպման ընթացքում ՊՆ ներկայացուցիչներն անդրադարձել են զինծառայողների իրավունքների պաշտպանության մեխանիզմներին և ռազմական կրթության գրավչության բարձրացման ուղղությամբ իրականացվող բարեփոխումներին[123]:

---

[121] https://mil.am/hy/news/10279
[122] https://mil.am/hy/news/10653
[123] https://mil.am/hy/news/10658

2022 թ. հունիսի 9-ին և 10-ին ՀՀ պաշտպանության նախարարության և Եվրոպայի Խորհրդի երևանյան գրասենյակի համագործակցության շրջանակում ռազմական ոստիկանության անձնակազմի համար ՊՆ վարչական համալիրում անցկացվել են վերապատրաստման դասընթացներ՝ նվիրված զինված ուժերում խոշտանգումների, վատ վերաբերմունքի և մահվան դեպքերի արդյունավետ քննությանը[124]:

2022 թ. հունիսի 13-ին, ըստ ՀՀ ՊՆ տարածած հաղորդագրության՝[125] ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանի կուրսանտական կազմի համար անցկացվել է դասընթաց՝ «Կյանքի իրավունքը և պետության պարտավորությունը զինծառայողների կյանքի իրավունքի պաշտպանության հարցում» թեմայով, որը կազմակերպել էին ՀՀ ՊՆ մարդու իրավունքների և բարեվարքության կենտրոնը և Եվրոպայի խորհրդի երևանյան գրասենյակը՝ «Մարդու իրավունքները և կանայք Հայաստանի զինված ուժերում-II փուլ» ծրագրի շրջանակներում, որը վարել է ԵԽ միջազգային փորձագետ Սաշա Յանկովիչը:

Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության գործողությունների ծրագրի շրջանակում պաշտպանության նախարարության մարդու իրավունքների և բարեվարքության կազմակերպման կենտրոնի աշխատակիցները այցելություններ են կատարում զորամասեր:

Այսպես, 2022 թ. ընթացքում 2022 թ. հունվարի 17-ին բարեվարքության կազմակերպման կենտրոնի աշխատակիցներն այցելել են ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Երևանի թիվ 4 տարածքային ստորաբաժանում[126]: Այցելության նպատակն էր կյանքի իրավունքի և խոշտանգումների արգելքի վերաբերյալ զորակոչիկների իրազեկվածության բարձրացումը, ինչպես նաև տեղեկացումը ՊՆ մարդու իրավունքների և բարեվարքության կենտրոնի գործունեության մասին:

---

[124] https://mil.am/hy/news/10736
[125] https://mil.am/hy/news/10739
[126] https://factor.am/464858.html

2022 թ. հուլիսի 1-ին ՀՀ պաշտպանության նախարարության մամուլի ծառայությունը տեղեկացրեց[127], որ բարեվարքության կազմակերպման կենտրոնի աշխատակիցներն այցելել են ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Կոտայքի մարզի տարածքային ստորաբաժանում, հետևել են զորակոչի ընթացքին, զրուցել զորակոչիկների հետ, իրազեկել նրանց իրավունքների և պարտականությունների մասին:

Նման այցերը շատ կարևոր են զորակոչիկների իրազեկման մակարդակի բարձրացման տեսանկյունից, սակայն ակնհայտ է, որ դրանք պետք է կրեն պարբերական և համակարգային բնույթ և դրանց մասին պետք է մշտապես իրազեկել հանրությանը:

Անդրադառնալով զինված ուժերում մարդու իրավունքների վիճակին՝ նշենք, որ 2022 թ. առաջին կիսամյակում պաշտոնական տվյալներով արձանագրվել է զինծառայողների մահվան 30 դեպք, որոնցից 9-ը՝ հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով է, 7-ը՝ ավտովթարի, 7-ը՝ առողջական խնդիրների, 4-ը՝ ինքնասպանություն կամ ինքնասպանության հասցնելու, 2-ը՝ սպանության, 1-ը՝ դժբախտ պատահարի:[128]

Համեմատության համար նշենք, որ 2021 թ. նույն ժամանակահատվածում՝ հունվար - հունիս ամիսներին, գրանցվել է 29 զինծառայողի մահվան դեպք, որից 2021 թ. հունվար-հունիս ժամանակահատվածում գրանցվել է ՀՀ և ԱՀ/ԼՂ զինված ուժերի 29 զինծառայողի մահվան դեպք, որից 9-ը՝ ավտովթարի հետևոնքով,8-ը՝ առողջական խնդիրների, 4-ը՝ դժբախտ պատահարի (1-ը՝ ձնահյուսի, 1-ը՝ կայծակնահարման, 1-ը՝ ծառի տապալման, 1-ը մեքենան նորոգելիս դետալը հարվածելու հետևանքով), 4-ը՝ ինքնասպանության, 3-ը՝ հրադադարի ռեժիմի խախտման, 1-ը՝ սպանության (ԶՕԿ)[129]:

Այսպես, 2022 թ. հունվար – հունիս ամիսների ընթացքում արձանագրված մահացության դեպքերից մարտական պայմաններում՝ հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով արձանագրվել է դեպքերի 30 %-ը, իսկ 70 %-ը արձանագրվել

[127] https://mil.am/hy/news/10812
[128] https://hcav.am/death-certificate-18-07-2022/?fbclid=IwAR1mdVcJUyfw6123Z07d0Cb-2AVteuzvs3X8_lUeE8Ah-n9YWDuaq4TK_8k
[129] https://hcav.am/2021-mahvan-depqer/

է ոչ մարտական պայմաններում, մասնավորապես՝ 23 %-ը ավտովթարի հետևանքով, 23 %-ը առողջական խնդիրների, 13 %-ը ինքնասպանության, 7 %-ը՝ սպանության, 3 %-ը՝ դժբախտ պատահարի։

Վերստին արձանագրում են, որ զինված ուժերում շարունակվում են ոչ մարտական պայմաններում զինծառայողների մահացության մտահոգիչ դեպքերը, որոնք հետևանք են զինված ուժերում մարդու իրավունքների և զինվորական կարգապահության պաշտպանության ոչ պատշաճ պահպանման։

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը բազմիցս նշել է, որ զինված ուժերի հաշվետվողականությունը օրենսդիր մարմնի առջև պետք է արդյունավետ լինի և որ զինված ուժերում կոռուպցիոն ռիսկերի նվազեցման երաշխիքը արդյունավետ վերահսկողության տակ պետք է լինի։

ՀՔԱ Վանաձոր գրասենյակի նախաձեռնությամբ և ռազմաքաղաքական հարցերով փորձագետների ներգրավմամբ մշակվեց և 2022 թ. հունիսի 28-ին հրապարակվեց[130] «Զինված ուժերի բարեփոխումների վերաբերյալ կանաչ թուղթ» աշխատությունը, որում անդրադարձ է կատարվում Հայաստանի Հանրապետության զինված ուժերի քաղաքացիական, ժողովրդավարական վերահսկողության առկա մեխանիզմներին, անվտանգային ոլորտի նկատմամբ խորհրդարանական վերահսկողության գործիքներին, արդյունավետ և նոր մեխանիզմների ձեւավորման անհրաժեշտությանը՝ ի նպաստ թափանցիկության, հաշվետվողականության, մասնակցայնության սկզբունքների հնարավորինս արդյունավետ ապահովման և կոռուպցիոն ռիսկերի նվազեցման։

Ըստ փորձագետ Արմինե Մարգարյանի՝ զինված ուժերի ժողովրդավարական վերահսկողության արդյունավետության համատեքստում առանցքային նշանակություն ունի քաղաքացիական փորձառության տարրի ինստիտուցիոնալացումը, երբ ներդրվում են պաշտպանական քաղաքականության նկատմամբ վերահսկողական գործառույթներ իրականացնող քաղաքացիական

[130] https://hcav.am/green-paper/

մարմինների՝ պաշտպանական ոլորտի գիտելիքների շարունակական կատարելագործման պահանջներ և մեխանիզմներ:

Զինված ուժերի քաղաքացիական վերահսկողության արդյունավետությունն անհրաժեշտ է դիտարկել համապարփակ, այդ թվում՝ խորհրդարանական վերահսկողական մեխանիզմների արդյունավետ կիրարկման համատեքստում:

Զինված ուժերի գաղափարական չեզոքության և ներքին գործերին չմիջամտելու սկզբունքը, զինված ուժերում մարդու իրավունքների երաշխիքների ապահովումը, զինծառայողների նկատմամբ ֆիզիկական և հոգեբանական բռնության դեպքերը և նմանատիպ այլ խնդիրները հասցեագրելու համար առանցքային նշանակություն ունի զինված ուժերում ժողովրդավարական վերահսկողության նորմերի կիրառմանը միտված մեխանիզմների (իրավական շրջանակ, ինստիտուցիոնալ մեխանիզմներ և կրթական միջոցներ) արդյունավետ կիրարկումը:

Այսպես, զինված ուժերում ժողովրդավարական վերահսկողության սկզբունքների կիրարկմանը միտված ծրագրային միջոցառումների և կրթական մեխանիզմների շրջանակը կարող է ներառել՝

- սպայական և սերժանտական կազմի բոլոր մակարդակներում բանիմաց հրամանատարների առկայության ապահովումը,
- զինծառայողների՝ իրենց իրավունքների մասին տեղեկացվածության ապահովումը,
- զինված ուժերում մարդու իրավունքների վերաբերյալ պարտադիր դասընթացների կազմակերպումը ավագ դպրոցներում՝ պարտադիր զինծառայության ենթակա քաղաքացիների համար,
- հրամանատար սպաների համապատասխան ուսուցում և վերապատրաստում, որը նրանց հնարավորություն կտա իրացնելու իրենց իշխանությունը՝ միաժամանակ ենթակաների իրավունքները հարգելով,
- Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարանում և Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարանում զինված ուժերում ժողովրդավարական արժեքների, մարդու իրավունքների, միջազգային մարդասիրական իրավունքի և

զինված ուժերում ժողովրդավարական վերահսկողության նորմերի վերաբերյալ ուսուցողական ծրագրերի ներառումը՝ արտասահմանյան ոլորտային հեղինակավոր հաստատությունների ներգարվմամբ,

- Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարանի և Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարանի համապատասխան մասնագետների վերապատրաստման դասընթացների ապահովում՝ արտասահմանյան ոլորտային հեղինակավոր հաստատություններում:

Պաշտպանական ոլորտում ժողովրդավարական վերահսկողության մեխանիզմների ընդլայնման, քաղաքական չեզոքության, զինծառայողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության, զինված ուժերի գործունեության թափանցիկության ապահովման նպատակով դեռևս շարունակում է արդիական մնալ երկար տարիներ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից կատարվող առաջարկը զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության հատուկ մեխանիզմ՝ ռազմական օմբուդսմենի ինստիտուտ ստեղծելու մասին[131]:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ ինչպես նախկինում, այժմ ևս զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական և քաղաքացիական վերահսկողության վերաբերյալ սահմանադրական պահանջը դեռևս պատշաճ չի ապահովվում, սահմանված չեն ժողովրդավարական վերահսկողության և քաղաքացիական հասարակության մասնակցությամբ քաղաքացիական արդյունավետ մեխանիզմներ, ապահովված չէ թափանցիկություն և մասնակցայնություն՝ հատկապես զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության արդյունավետ մեխանիզմերի ձևավորման հարցում:

[131] http://archive.hcav.am/events/27-01-2016-0254/

Առաջնահերթություն 11

Ռազմավարական նշանակության օբյեկտների ու ենթակառուցվածքների անվտանգության մակարդակի բարձրացում

Անդրադառնալով այս առաջնահերթությամբ նախատեսվող «ռազմավարական նշանակության օբյեկտների ու ենթակառուցվածքների անվտանգության մակարդակի բարձրացման» խնդրին, դեռևս 2021 թվականին հրապարակված տեղեկանքում[132] արձանագրեցինք, որ 2020 թ. 44-օրյա պատերազմից հետո հայ-ադրբեջանական առաջացած նոր սահմանին համապատասխան ենթակառուցվածքների բացակայությունը խոչընդոտում է ոչ միայն զինծառայողների ծառայության իրականացման բնականոն ընթացքը, այլ նաև դրա պատճառով արձանագրվում են զինծառայողների, ինչպես նաև սահմանամերձ բնակավայրերի բնակիչների անվտանգությանը, կյանքին և առողջությանը սպառնացող միջադեպեր։

Մասնավորապես՝ 2022 թ. մարտի 10-ին Արցախի Խրամորթ գյուղի 51-ամյա բնակիչ Սուրեն Բաղրյանն իր տան բակում գյուղատնտեսական աշխատանքներ կատարելու ժամանակ ադրբեջանական կողմից արձակած ականանետի կրակոցից մեջքի շրջանում բեկորային վիրավորում է ստացել: Ականը պայթել է տան բակում[133]:

Գյուղի բնակիչները «Ազատություն ռադիոկայանի» հետ զրույցում հայտնեցին, որ մարտի 9-ից ողջ գիշեր Խրամորթի ուղղությամբ ադրբեջանական կողմը ականանետի 23 արկ է կիրառել։ Գյուղի բնակիչները նաև շարժ են նկատել և տեսել են, թե ադրբեջանական կողմն ինչպես է զինտեխնիկա մոտեցրել դիրքերին: Այդ պատճառով երեխաներին և կանանց մեծ մասին տեղափոխել են գյուղից։

Մինչ այդ՝ 2022 թ. մարտի 7-ի գիշերը, Հայաստանի Հանրապետությունից Արցախ մտնող գազատար խողովակաշարի վնասման հետևանքով Արցախի Հանրապետությունում դադարեցվեց գազամատակարարումը։ Գազատարի վնասված

---

[132] https://hcav.am/wp-content/uploads/2021/11/%D4%B6%D5%AB%D5%B6%D5%BE%D5%A1%D5%AE-%D5%B8%D6%82%D5%AA%D5%A5%D6%80-%D5%A2%D5%A1%D6%80%D5%A5%D6%83%D5%B8%D5%AD%D5%B8%D6%82%D5%B4%D5%B6%D5%A5%D6%80.pdf (էջ 46)

[133] https://www.azatutyun.am/a/31745994.html

հատվածը ադրբեջանական զինված ուժերի վերահսկողության տակ գտնվող գոտում էր[134]: «Արցախգազ» ՓԲԸ մասնագետների կողմից վերանորոգման աշխատանքներ իրականացնելու համար Արցախում տեղակայված ՌԴ խաղաղապահ զորակազմի ներկայացուցիչների և Անվտանգության խորհրդի գրասենյակի աշխատակիցների մասնակցությամբ ադրբեջանական կողմի հետ տարվեցին բանակցություններ, որոնց արդյունքում գազամատարարումը կարգավորվեց միայն 12 օր անց՝ մարտի 19-ին[135]:

Նկատենք, որ ըստ Արցախի պաշտպանության նախարարության՝ 2022թ. մարտի 24-ին Ադրբեջանի ԶՈՒ ստորաբաժանումները ներխուժեցին Արցախի Հանրապետությունում ՌԴ խաղաղապահ զորակազմի պատասխանատվության գոտի՝ վերահսկողության տակ վերցնելով Ասկերանի շրջանի Փառուխ գյուղն ու հարակից դիրքերը և փորձելով առաջխաղացում ապահովել Արցախի Հանրապետության արևելյան սահմանագոտում[136]: Մինչ այժմ՝ 2022 թ. հուլիսի դրությամբ, Ադրբեջանի զինված ուժերը շարունակում են մնալ այդ տարածքում: Ի դեպ, ՌԴ արտգործնախարար Ս. Լավրովը 2022 թ. հունիսի 5-ին Հայաստանի արտգործնախարար Ա. Միրզոյանի հետ հանդիպման ժամանակ նշեց, որ «սահմանազատման առարկայական աշխատանքներ սկսելու շրջանակում Փառուխի հարցերն անպայման կքննարկվեն և լուծում կստանան»[137]:

2022 թ. մայիսի 24-ին Հայաստանի և Ադրբեջանի միջպետական սահմանին տեղի ունեցավ երկու երկրների փոխվարչապետերի՝ Մհեր Գրիգորյանի և Շահին Մուստաֆաևի առաջին հանդիպումը՝ սահմանազատման և սահմանային անվտանգության հարցերով հանձնաժողովների համատեղ աշխատանքի ձևաչափով:

Հանդիպման ընթացքում Հայաստանի և Ադրբեջանի փոխվարչապետերը վերահաստատեցին իրենց պատրաստակամությունը՝ աշխատանքներ տանելու սահմանազատման և այլ համապատասխան հարցերի շուրջ[138]:

---

[134] https://factor.am/485279.html
[135] https://www.armtimes.com/hy/article/233259
[136] https://factor.am/491621.html
[137] https://armeniasputnik.am/20220609/parukhi-harcy-klutsvi-sahmanazatman-ararkajakan-ashkhatanqner-skselu-shrjanakum-lavrvov-43105020.html
[138] https://www.azatutyun.am/a/31865710.html

Հանդիպումից հետո՝ մայիսի վերջին ՌԴ փոխարտգործնախարար Անդրեյ Ռուդենկոն լրագրողներին հայտնեց[139], որ սահմանազատման հարցերով հանձնաժողովների նիստը տեղի կունենա հաջորդ շաբաթ՝ հունիսի սկզբին Մոսկվայում, սակայն այն այդպես էլ չկայացավ: 2022թ հունիսի 15-ին ՌԴ արտգործնախարարության խոսնակ Մարիա Զախարովան հայտարարեց[140], որ Ռուսաստանը պատրաստ է առաջիկայում կազմակերպել հայ-ադրբեջանական սահմանի սահմանազատման և սահմանագծման հանձնաժողովի երկրորդ հանդիպումը: Այնուամենայնիվ, սահմանազատման հարցով երկրորդ հանդիպում դեռևս չի կայացել:

Ինչ վերաբերում է սույն առաջնահերթությամբ սահմանված ռազմավարական նշանակության օբյեկտների ու ենթակառուցվածքների անվտանգության մակարդակի բարձրացմանը, ապա հարկ է անդրադառնալ առաջնագծի կահավորմանը և այդ ուղղությամբ տարվող աշխատանքներին:

Այսպես, դեռևս նախորդ տեղեկանքում[141] արձանագրել էինք հայ-ադրբեջանական սահմանին մարտական դիրքերի կահավորման խնդիրների մասին 2020 թ. 44-օրյա պատերազմի դադարից հետո: Մանավորապես՝ համացանցում տարածվեցին տեղեկություններ այն մասին, որ հայկական մարտական դիրքերում զինծառայողներն ունեն ջրի, ուտելիքի խնդիր, գիշերում են վրաններում կամ պոլիէթիլենային տոպրակների տակ, չունեն տաք հագուստ և անվադողեր են վառում տաքանալու համար, ինչպես նաև օրվա ընթացքում կապի միջոցները անջատած են պահում, որպեսզի լիցքավորումը պահպանվի գիշերվա համար[142]: Եվ դեռևս 2021 թ. մարտի 15-ին ՀՀ պաշտպանության փոխնախարար Արման Սարգսյանը լրատվամիջոցների հետ զրույցում հայտնեց, որ Պաշտպանության նախարարությունը

---

[139] https://www.1lurer.am/hy/2022/05/25/Hayastani-yev-Adrbejani-sahmanayin-handznazhoghovneri-hajord-nisty-Moskvayum-RD-AGN/728944?fbclid=IwAR0YysnSEsyl2aD1rAlgMDLFI-IvhR65jaOsJKLE3Cg1TtVN8C2FnvQGQIo

[140] https://armeniasputnik.am/20220615/sahmanazatman-handznazhoghovi-gortsuneutjuny-kap-chuni-gharabaghum--iravitshaki-het-zakharvova-43535766.html

[141] https://hcav.am/wp-content/uploads/2021/11/%D4%B6%D5%AB%D5%B6%D5%BE%D5%A1%D5%AE-%D5%B8%D6%82%D5%AA%D5%A5%D6%80-%D5%A2%D5%A1%D6%80%D5%A5%D6%83%D5%B8%D5%AD%D5%B8%D6%82%D5%B4%D5%B6%D5%A5%D6%80.pdf (էջ 46)

[142] https://hetq.am/hy/article/132736 , https://www.azatutyun.am/a/31152088.html

և Գլխավոր շտաբը ամեն ինչ անում են զինվորների վիճակը, պայմանները բարելավելու ուղղությամբ[143]:

Հետագայում՝ 2021 թ. դեկտեմբերի 31-ին, Սյունիքի Սև լճի մարտական դիրքեր այցելած ՀՀ Ազգային ժողովի Պաշտպանության և անվտանգության հանձնաժողովի անդամ Արմեն Խաչատրյանը նշեց, որ այնտեղ դանդաղ, բայց մեծ ծավալի աշխատանքներ են ընթանում[144]: Ի դեպ, 2022 թ. հուլիսի 6-ին Արմեն Խաչատրյանն ընտրվեց ՀՀ Ազգային ժողովի Պաշտպանության և անվտանգության հանձնաժողովի նախագահի տեղակալ[145]: Նույն ժամանակ Սյունիքի առաջնագիծ այցելած «Պատիվ ունեմ» խմբակցության պատգամավոր, ՀՀ ԱԺ մարդու իրավունքների և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Թագուհի Թովմասյանը մտահոգություն հայտնեց առաջնագծի կահավորման վերաբերյալ՝ նշելով, որ դիրքերը խառն են, մեկը մյուսի մեջ: Ըստ նրա՝ կան հատվածներ, որտեղ մեր առաջնագիծն անցնում է մարդկանց տների միջով, կողքով, վրայով»:

2022 թ. հունիսին ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը հանրային հեռուստաընկերության եթերում հայտարարեց, որ պատերազմից հետո առաջացած նոր սահմանները կահավորելու, առաջնագիծ հասնող ճանապարհների կառուցման ուղղությամբ հսկայական աշխատանք է տարվում: Ընդդիմադիր քաղաքական գործիչ Տիգրան Աբրահամյանը, սակայն, լրատվամիջոցներից մեկի հետ զրույցում կարծիք հայտնեց, որ «ծավալային առումով, թիրախային առումով ըստ կարևորության, ըստ նշանակության աշխատանքները չի իրականացվել»[146]:

Այսպիսով, ինչպես և նախկինում, կառավարության սույն առաջնահերթության ուղղությամբ կատարված աշխատանքների մասին հիմնականում նշվում է պաշտոնյաների կողմից՝ չմասնավորեցնելով կատարված աշխատանքների ծավալը: Ակնհայտ է, որ կատարված աշխատանքների վերաբերյալ առկա տեղեկությունները հնարավորություն չեն տալիս պատշաճորեն գնահատել ռազմավարական

---

143 https://www.azatutyun.am/a/31152088.html
144 https://www.azatutyun.am/a/31650751.html
145 www.1lurer.am/hy/2022/07/06/Պաշտպանության-և-անվտանգության-հանձնաժողովի-նախագահի-տեղակալ-ընտրվեց-Արմեն-Խաչատրյանը/755679
146 https://www.azatutyun.am/a/31887271.html

նշանակության օբյեկտների ու ենթակառուցվածքների անվտանգության մակարդակի բարձրացման ուղղությամբ տարված աշխատանքների արդյունավետության մասին:

Անդրադառնալով Կառավարության 2021–2026 թթ. հնգամյա ծրագրով նախատեսված զինված ուժերի բարեփոխումների առաջնահերթությունների կատարմանը, արձանագրում ենք հետևյալը.

- *ըստ պաշտոնատար անձանց՝ պրոֆեսիոնալ բանակի ստեղծման ուղղությամբ որոշակի քայլեր կատարվում են՝ դրա հիմքում որպես շահագրգռող գործոն դնելով զինծառայողների ֆինանսական ապահովությունը, սակայն այդ ուղղությամբ քայլերը տեսանելի չեն,*
- *զինվորական ծառայության ժամկետների փոփոխության վերաբերյալ հստակ որոշում դեռևս չկա,*
- *ազգային անվտանգության ռազմավարության վերանայման ու նոր ռազմական դոկտրինի մշակման ուղղությամբ իրականացվող քայլերի մասին տեղեկություններ ևս հայտնի չեն,*
- *հայտնի չէ նաև, թե ինչ քայլեր են կատարվել միասնական ավտոմատացված կառավարման համակարգի ներդրման ուղղությամբ,*
- *զինված ուժերի կազմակերպական և հաստիքային կառուցվածքի բարելավման ուղղությամբ իրականացված գործողությունների մասին ևս բավարար չափով թափանցիկություն չկա,*
- *Հայաստանը շարունակում է իր զինված ուժերի բարեփոխումներն իրականացնել Ռուսաստանի նման ավտորիտար պետության աջակցությամբ և մասնակցությամբ,*
- *հաշվի առնելով ոչ մարտական պայմաններում մահվան դեպքերի առկայությունը՝ կարելի է արձանագրել, որ ՀՀ զինված ուժերում կրթության ոչ բավարար մակարդակը և կանոնադրային հարաբերությունների խախտումները շարունակում են մնալ զինված ուժերի բարեփոխումներին խոչընդոտող կարևորագույն հանգամանքներ,*

- *հայտնի չէ, թե ինչ ծավալներով է Հայաստանում զարգանում տեղեկատվական և կիբեռանվտանգության ոլորտը, և արդյոք այդ ուղղությամբ ձեռնարկված քայլերը բավարար են երկրի անվտանգության ապահովման համար,*
- *զինված ուժերում քրեական հանցագործությունների վերաբերյալ տեղեկությունները վկայում են բարոյահոգեբանական վիճակի ոչ բավարար մակարդակի մասին։*
- *ռազմավարական նշանակության օբյեկտների ու ենթակառուցվածքների անվտանգության մակարդակի բարձրացման ուղղությամբ տարված աշխատանքների արդյունավետությունը դեռևս անհնար է գնահատել՝ ոչ բավարար քանակի տեղեկությունների պատճառով,*
- *պաշտպանական ոլորտում ժողովրդավարական վերահսկողության մեխանիզմների ընդլայնման, մարդու իրավունքների պաշտպանության արդյունավետ մեխանիզմերի ձևավորման տեսանկյունից դեռևս արդիական է մնում ռազմական օմբուդսմենի ինստիտուտ ստեղծելու առաջնահերթությունը։*